

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA

**ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ
YOU HAVE A RIGHT TO KNOW**

տ ե ղ ե կ ա գ ի ր / b u l l e t i n N 3 9

հ ու ն վ ա թ / j a n u a r y 2 0 1 3

Հրատարակվում է 2001 թվականից/ Published since 2001

www.foi.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ/CONTENT

<u>ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>	
ՏԱ կրթական կենտրոնում վերապատրաստվեց 400 համայնքային ժառանգող	5
Կայացավ աշխատանքային քննարկում փաստաբանների և լրագրողների հետ.....	6
ՀՀ պետական մարմինների կայքերը տեղադրում են տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը.....	7
Աշխատանքային քննարկում՝ ՏՎԽ-ի և ՀՀ դատական դեպարտամենտի աշխատանքային խմբի մասնակցությամբ.....	8
Շուկայի վերահսկողության պետական տեսչության ստուգումների արդյունքներն արդեն մատչելի են.....	10
<u>ՏԱ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ</u>	
Ջարթոնքի գյուղապետարանի դեմ 3 տարի տևած դատական գործն ավարտվեց ԻԱԿ-ի հաղթանակով.....	11
ԻԱԿ-ը կստանա տեղեկատվություն և փոխհատուցում	12
ՀԴԿ-ն ԻԱԿ-ին կվճարի 100.000 դրամ տեղեկատվությունը թաքցնելու համար.....	13
<u>ՏԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>	
Որքա՞ն են ծախսում նախարարությունները հյուրասիրությունների վրա.....	14
Տեղեկատվության ազատությունը ՏԻՄ-երում.....	18
Քրեական գործերով տեղեկատվության տրամադրման կանոններ.....	23
ՍԵՎ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՑՈՒՑԱԿՆԵՐ - 2012	31
ENGLISH VERSION	
Rules For Providing Information on Criminal Cases are Adopted.....	35
Results of checkups by the State Inspectorate for Surveillance of Markets are now available	36
DRAFT, Open Government Standards/Principles	37
The FOICA won the court case against the Zartonk Village Municipality, which lasted 3 years.. ..	40
The Democratic Party of Armenia will pay 100.000 AMD to the FOICA for hiding information	40
FOICA to Receive Information and Compensation.....	41
How much do the ministries spend on catering?.....	42
White and Black Lists - 2012.....	44

Ծրագրի ղեկավար՝ Շուշան Դոյդոյան
Project Director Shushan Doydoyan



«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են և չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

ՏԱ կրթական կենտրոնում վերապատրաստվեց

400 համայնքային ծառայող

2011-2012թթ. Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնում 400 համայնքային ծառայող ստացավ գիտելիք տեղեկատվության ազատության և միջանձնային հարաբերությունների վերաբերյալ:



Յամայնքային ծառայողները վերապատրաստվել են «Միջանձնային հարաբերությունները, տեղեկատվության ազատությունը և հասարակայնության հետ կապերի ապահովումը տեղական ինքնակառավարման համակարգում» վերապատրաստման ծրագրով, որը 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 129-Ա հրամանով հաստատել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը:

Այսպիսի վերապատրաստում անցնելու անհրաժեշտություն, ինչպես նշում էին մասնակից համայնքային ծառայողները, վաղուց էր առաջացել, քանի որ համայնքային ծառայողները, լինելով ամենօրյա աշխատանքային շփման մեջ քաղաքացիների հետ, կարիք էին զգում ավելացնելու և զարգացնելու իրենց գիտելիքը միջանձնային, ղեկավար-ենթակա հարաբերությունների, տեղեկատվության ազատության և այլնի ուղղությամբ: «Լրացրեցի այն բացը, որն ինձ անհրաժեշտ էր, նաև շատ գիտելիք ստացա բանախոսներից», -նշել էր Արարատի մարզի Այնթափի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Վերապատրաստումներն եռօրյա էին, որոնց ընթացքում ոչ միայն մասնակիցներին ներկայացվում էր տվյալ դասընթացի թեման, այլ նաև քննարկումների, հարցուպատասխանների միջոցով համայնքային ծառայողները ստանում էին իրենց հուզող հարցերի պատասխանները:

Նշենք, որ Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնը հիմնադրվել է 2010 թվականի նոյեմբերի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում: 2010-2011թթ. կրթական կենտրոնում վերապատրաստվել է 301 քաղաքացիական ծառայող, իսկ 2011-2012թթ.-ին՝ 400 համայնքային ծառայող:

Կայացավ աշխատանքային քննարկում փաստաբանների և լրագրողների հետ

2012թ.-ի հոկտեմբերի 27-ին և 28-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ Տեղեկատվական վեճերի խորհուրդն անցկացրեց աշխատանքային քննարկում փաստաբանների և լրագրողների մասնակցությամբ:

Աշխատանքային քննարկումը կազմակերպվել էր ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ դատական գործերով Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձը: Ներկաներին ողջունեց ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման բաժնի ծրագրերի համակարգող Ծովհնար Արևյանը, արդյունավետ և ակտիվ աշխատանք մաղթեց, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց ՏՎԽ-ի անդամներին: Ապա, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ, ՏՎԽ քարտուղար Շուշան Դոյոյանը ներկայացրեց Տեղեկատվական վեճերի խորհրդի հիմնական գործառույթները և մինչ օրս կատարած աշխատանքների ամփոփ հաշվետվությունը:

Աշխատանքային քննարկման առաջին բանախոսը «Արնի Քննալք» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն, ՏՎԽ անդամ Արայիկ Ղազարյանն էր, ով ներկայացրեց վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ դատական գործերով խորհրդի կարծիքները, վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ 2012 թ.-ին տեղի ունեցած դատական գործերը: Ա. Ղազարյանի ներկայացրած վիճակագրությունը ցույց տվեց, որ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ դատական գործերով դատարանները հիմնականում պաշտպանում են ՁԼՄ-ներին:

Այնուհետև, ՀՀ գլխավոր դատախազի մամլո խոսնակ Սոնա Տռուզյանը ներկայացրեց Հանցագործությունների լուսաբանման առանձնահատկությունները, խնդիրները կապված մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունք և անմեղության կանխավարկածի ոտնահարման հետ: Ս. Տռուզյանը նշեց, որ, հանրային անձի անձնական կյանքի գաղտնիությունը պետք է ավելի մատչելի լինի: Սակայն հավելեց նաև, որ շատ հաճախ մարդկանց անձնական կյանքի իրավունքը ոտնահարվում է զլն հրապարակումներում: Քննարկման ըն-

թացքում Սոնա Տռուզյանը նաև արձանագրեց, որ առկա է նաև լրագրողների, մասնավորապես՝ առցանց հարթակում գործող լրագրողների պրոֆեսիոնալիզմի պակաս:

Աշխատանքային քննարկման երկրորդ օրը նվիրված էր էլեկտրոնային լրատվամիջոցներում վիրավորանքի և զրպարտության խնդիրներին: Թեման ներկայացրեցին aravot.am-ի առցանց խմբագիր Աննա Իսրաելյանը և «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի նախագահ Սուրեն Դեհերյանը: Աննա Իսրաելյանն անդրադարձավ սոցիալական ցանցերում լրատվամիջոցների կողմից տարածվող տեղեկատվության, սոցիալական ցանցերի միջոցով առցանց լրատվամիջոցներում հայտնվող վիրավորական կամ զրպարտող մեկնաբանությունների (comment) խնդրին: Մի կողմից ցույց տալով վիրավորական և զրպարտող մեկնաբանությունները հեռացնելու անհրաժեշտությունը, մեկնաբանությունները զտելու նպատակահարմարությունը ՁԼՄ-ի համար, Աննա Իսրաելյանը մյուս կողմից հավելեց, որ առցանց բովանդակության մոդերացիան ընթերցողների կողմից դիտվում է որպես գրաքննություն: Ծավալված քննարկման արդյունքում մասնակիցները հանգեցին եզրակացության, որ ՁԼՄ-ն պետք է հնարավորինս իրականացնի մոդերացիա՝ իր մատուցած բովանդակությունում վիրավորանք և զրպարտություն թույլ չտալու համար:

Սուրեն Դեհերյանն առավելապես անդադարձավ առցանց լրագրողության էթիկական խնդիրներին, առցանց հարթակում չճշտված, չստուգված կամ միակողմանի ներկայացված լրատվության տարածվածության խնդրին:

Աշխատանքային քննարկման ավարտին մասնակիցները կարևորեցին նմանատիպ քննարկումների օգտակարությունն առկա խնդիրները վերհանելու հարցում և առաջարկեցին նման քննարկումներին հրավիրել նաև այն դատավորներին, ովքեր նմանատիպ գործերով վճիռներ են կայացրել:

ՀՀ պետական մարմինների կայքերը տեղադրում են տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մշակած տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևն այսօր արդեն տեղադրված է մեկ տասնյակից ավելի պետական կառույցների պաշտոնական ինտերնետային կայքերում՝ օգնելու տեղեկատվություն փնտրող քաղաքացիներին ու լրագրողներին: Հարցման օրինակելի ձևի օգնությամբ մարդիկ կարողանում են առավել գրագետ ձևակերպել իրենց հարցումները:

Առաջինը ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ 10 մարզպետարանների կայքերն էին, որ 2011թ. տեղադրեցին տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը, իսկ արդեն 2012թ.-ի վերջին ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ ոստիկանության և 6 նախարարությունների՝ ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարությունների պաշտոնական ինտերնետային կայքերում տեղադրված է ԻԱԿ-ի մշակած տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը:

Նշենք, որ բոլոր պետական մարմիններն էլ պատրաստակամ են տեղադրելու իրենց պաշտոնական էջերում տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը, սակայն որոշ նախարարություններ

ում դեռևս կան տեխնիկական խնդիրներ, որոշներն էլ պատրաստվում են արդիականացնել իրենց կայքերը՝ խոստանալով անպայման տեղադրել հարցման ձևը:

Հարցման ձևը հիմնականում տեղադրված է նշված կառույցների պաշտոնական կայքերի տարբեր բաժիններում: Օրինակ, ՀՀ նախագահի պաշտոնական կայքում՝ www.president.am-ում, այն տեղադրված է «Աշխատակազմ» բաժնում՝ առանձին ենթաբաժնով, ՀՀ կառավարության կայքի «Տեղեկատվական կենտրոն» բաժնում՝ <http://www.gov.am/am/inquiry-sample/>, ՀՀ առողջապահության նախարարության կայքում՝ www.moh.am-ում տեղադրված է «Տեղեկատու» բաժնում, իսկ ՀՀ արդարադատության կայքում՝ www.moj.am-ում, «գործառույթներ» բաժնում:

ԻԱԿ-ը հետամուտ է լինելու, որպեսզի պետական կառավարման բոլոր մարմիններն իրենց պաշտոնական կայքերում տեղադրեն ԻԱԿ-ի մշակած տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձևը, ինչը նաև կնպաստի տեղեկություններ ստանալու հարցումների դասակարգում իրականացնել:

Աշխատանքային քննարկում՝ ՏՎԽ-ի և ՀՀ դատական դեպարտամենտի աշխատանքային խմբի մասնակցությամբ

2012թ.-ի նոյեմբերի 27-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ կազմակերպել էր աշխատանքային քննարկում Տեղեկատվական վեճերի խորհրդի անդամների և ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչների հետ: Հանդիպման նպատակն էր քննարկել ՏՎԽ-ի գործունեության զարգացման հեռանկարները:

Ներկաներին ողջունեց ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման բաժնի ղեկավար Օլիվեր Մկրտչը. «Ես շատ եմ կարևորում ՏՎԽ-ի աշխատանքը, քանի որ այստեղ հավաքված մարդիկ շատ մեծ փորձ ունեն, կարող են որպես փորձագետներ հանդես գալ դատարաններում: Ես խորհուրդ կտամ դատարաններում օգտագործել ՏՎԽ-ի կարծիքները»: Օ. Մկրտչը նաև հավելեց, որ այսուհետև ևս ԵԱՀԿ Երևանի գրասենյակը աջակցելու է նման նախաձեռնությունները: Այնուհետև, ԻԱԿ նախագահ, ՏՎԽ քարտուղար Շուշան Դոյոյանը ներկայացրեց Տեղեկատվական վեճերի խորհրդի անցած 1.5 տարվա աշխատանքային ուղին՝ նշելով, որ «Տեղեկատվական վեճերի խորհուրդն իր գործունեության ընթացքում բազմապիսի վերաբերմունքի է արժանացել՝ գովասանական, ողջունող խոսքերից մինչև քննադատություն, անհիմն մեղադրանքներ»:

«Տեղեկատվական վեճերի խորհուրդն արդեն 24 կարծիք է հրապարակել, որից 5-ի դեպքում կողմերից մեկի նախաձեռնությամբ, իսկ մնացած դեպքերում՝ սեփական նախաձեռնությամբ: Եվ եթե սկզբում ՏՎԽ-ն կարծիք էր հրապարակում վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ դատական գործերի ընթացքում, ապա այս տարվա մայիսից սկսած կարծիք է հրապարակում միայն դատական քննության ավարտից հետո, որով էլ բացառում է միջամտությունը, կողմնակալ կարծիքի ձևավորմանը արդարադատության իրականացման վրա», -իր խոսքում նշեց Շ. Դոյոյանը:

Աշխատանքային քննարկման բանախոս «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն, ՏՎԽ անդամ Արայիկ Ղազարյանն էլ իր խոսքում նշեց, որ «ՏՎԽ-ն անդրադարձել է միայն այն գործերին, որոնց կողմը ՉԼՄ է»: Ա. Ղազարյանի ներկայացրած վիճակագրությունը ցույց տվեց, որ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ դատական գործերը 2012թ.-ին զգալիորեն նվազել են 2010 և 2011թթ.-ի համեմատությամբ: Այս նվազման միտումն էր շնորհիվ 2011թ. հոկտեմբերին Սահմանադրական Դատարանի կայացրած որոշման է նաև, ինչին 2012թ. ապրիլին միացավ ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ իր նախադեպային որոշմամբ:

Բանախոսը նաև անդրադարձավ փոխհատուցման գումարի խնդրին. «Սկսած 2012 թ.-ի սկզբից՝ նոր հարուցված կամ ընթացքի մեջ գտնվող նախկին գործերով դատարանները սկսել են հետևողականորեն նվազեցնել փոխհատուցման չափերը՝ դատական ծախսերի և ոչ նյութական վնասի փոխհատուցման մասերով: Ավելին, դատարանները սկսել են փոխհատուցման չափը որոշելիս հաշվի առնել պատասխանող լրատվամիջոցի գույքային դրությունը, վիճահարույց տեղեկատվության տարածման եղանակը, հայցվորի կարգավիճակը (դատարանները էականորեն նվազեցնում կամ մերժում էին այն հայցապահանջները, որոնք բերվել էին քաղաքական գործիչների, օլիգարխների կամ հանրային բարձր պաշտոնյաների կողմից), ինչպես նաև, թե ընդհանուր առմամբ սահմանված փոխհատուցման չափը ինչ բացասական ազդեցության կարող է գործել լրատվամիջոցի գործունեության վրա, որը դիտվում էր որպես հանրային շահ: Այսինքն՝ քաղաքացիաիրավական հարաբերություններում դատարանները սկսել էին տեսնել նաև հանրային իրավահարաբերություններ, որի հետևանքով դատարանները սկսել են կիրառել հանրային և անհատական բախվող շահերը փոխհավասարակշռելու սկզբունքը»:

Ա. Ղազարյանը ներկայացրեց նաև ՏՎԽ-ի մոտեցումը գործերի ընտրության հարցում. «ՏՎԽ-ն կարող է ամբողջ գործից ընտրել միայն մի երևույթ՝ հաշվի առնելով դրա կարևորությունը»:

յուրաքանչյուր կարծիք վերաբերել է կոնկրետ մի խնդրի. Օրինակ՝ հայցային վաղեմության խնդրին, փոխհատուցման գումարի չափին և այլն: Ա. Ղազարյանն անդրադարձավ նաև վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ գործերի վիճակագրությանը՝ ներկայացնելով գործերի քանակը տարբեր ժամանակահատվածներում, դատարանների որոշումների բնույթը, ձևավորվող դատական պրակտիկայի տենդենցները: Բանախոսների ելույթներին հաջորդեց ակտիվ քննարկում:

ՏՎԽ անդամ Մանանա Ասլամազյանը նշեց, որ «ՏՎԽ-ի անդամները երկար տարիներ զբաղվում են լրատվամիջոցների կարգավորման հարցերով: Լինում են դեպքեր, երբ հենց լրատվամիջոցներն են սխալ լինում: Եվ ՏՎԽ-ի դերը, կարծում եմ, նաև լրատվամիջոցների կարգավորմանն է ուղղված: ՏՎԽ-ն իր գործունեությամբ, իր որոշումներով օգնում է լրագրողներին առավել պրոֆեսիոնալ գործել»:

ՀՀ դատական դեպարտամենտի աշխատանքային խմբի անդամներից ոմանք մտահոգություն հայտնեցին, որ ՏՎԽ-ն իր որոշումներով կարող է հասարակության մեջ դատական համակարգի նկատմամբ անվստահություն սերմանել, ինչին ՏՎԽ անդամ, Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը պատասխանեց, որ «Դատական որոշումների վերաբերյալ ցանկացած պարագայում լինում են քննարկումներ: Եվ ավելի լավ է մասնագիտական քննարկումներ լինեն»: Բացի այդ, Բ. Նավասարդյանի կարծիքով, ՏՎԽ-ի գործունեության շնորհիվ դատական համակարգի դերը բարձրացել է:

Քննարկման ընթացքում առաջարկ հնչեց, որ կարելի է ՏՎԽ-ին տալ համապատասխան կարգավիճակ, որն էլ կօգնի հորհրդին հանդես գալու հաշտարարի՝ միջնորդի դերում: Շուշան Դոյոյանն էլ առաջարկեց, որ կարելի է ձևավորել մի նախադեպ, որ դատարանները դիմեն ՏՎԽ-ին՝ զրպարտության և վիրավորանքի գործերով մասնագիտական կարծիք ստանալու համար:

ՀՀ դատական դեպարտամենտի աշխատանքային խմբի անդամները սկզբունքորեն որևէ խնդիր չտեսան այս մոտեցման առումով, միայն շեշտեցին, որ պետք է հստակ մեխանիզմներ գտնել այն իրականացնելու համար: Իսկ ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության պետի տեղակալ Սերգեյ Սահակյանն էլ առաջարկեց, որ ՏՎԽ-ն կարծիք հայտնի մինչդատական փուլում, ինչը կօգնի դատարանների բեռնաթափմանը, նաև չի ստեղծի կանխակալ կարծիք դատական գործի վերաբերյալ:

Աշխատանքային քննարկման ավարտին մասնակիցները կարևորեցին նմանատիպ քննարկումների օգտակարությունն առկա խնդիրները վերհանելու հարցում: Արսեն Բաբայանն էլ առաջարկեց և պատրաստակամություն հայտնեց շարունակել ՏՎԽ-դատական դեպարտամենտ համագործակցությունը:

Շուկայի վերահսկողության պետական տեսչության ստուգումների արդյունքներն արդեն մատչելի են

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետևողական ջանքերի շնորհիվ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի Շուկայի վերահսկողության պետական տեսչության բաժնում տեղադրվեցին տվյալ ծառայության կողմից իրականացված ստուգումների արդյունքները:

Վերջերս Շուկայի վերահսկողության պետական տեսչությունն իրականացրել էր աղմկահարույց ստուգումներ տնտեսվարող սուբյեկտների կողմից ոչ պարենային ապրանքների, ծառայությունների, տեխնիկական կանոնակարգերով և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների խախտումների վերաբերյալ, ինչի մասին սպառողը տեղեկատվություն էր ստանում միայն ՁԼՄ-ներից, այն էլ՝ ոչ ամբողջական:

ԻԱԿ-ը 05.10.2012թ. թիվ 183-ի 6 հարցմամբ դիմել է Շուկայի վերահսկողության պետական տեսչության պետ պարոն Լևոն Խալիկյանին՝ խնդրելով հայտնել, թե որտե՞ղ և ի՞նչ կարգով է Տեսչությունը հրապարակում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները: Հարցմանն ի պատասխան ստացվել է Շուկայի վերահսկողության պետական տեսչության պետի գրությունն այն մասին, որ անհրաժեշտ տեղեկատվությունը զետեղված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում:

Սակայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում www.mineconomy.am հասցեով Շուկայի վերահսկողության պետական տեսչության մասով բացակայում է Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով

սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, մասնավորապես, այդպիսիք առկա չէին կայքի՝ հետևյալ հասցեում՝ www.mineconomy.am/arm/49/gortsaruyt.html:

ԻԱԿ-ը 20.11.2012թ.-ին դիմել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարին՝ խնդրելով ապահովել, որպեսզի հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ավել, քան յոթ օրվա ընթացքում, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում տեղադրվի Շուկայի վերահսկողության պետական տեսչության վերաբերյալ՝ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկատվությունը: 2012թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ արդեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքի շուկայի վերահսկողության պետական տեսչության բաժնում տեղադրված են տվյալ ծառայության կողմից իրականացված 2011 և 2012թթ.. ստուգումների ամփոփ հաշվետվությունները, ստուգումների ընթացքում պահանջվող փաստաթղթերը, ստուգաթղթերի լրացման վերաբերյալ ուղեցույց, տեսչության հասցեն, հեռախոսահամարները, նաև՝ օրենսդրության փաթեթը, որի շրջանակներում աշխատում է նշյալ կառույցը:

Զարթոնքի գյուղապետարանի դեմ 3 տարի տևած դատական գործն ավարտվեց ԻԱԿ-ի հաղթանակով

2012թ.-ի դեկտեմբերի 12-ին ՀՀ վարչական դատարանը բավարարեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցն ընդդեմ Զարթոնքի գյուղապետարանի և գյուղապետի, այն է՝ ճանաչեց Զարթոնքի գյուղապետի գործողությունները ոչ իրավաչափ և պարտավորեցրեց փոխհատուցել ԻԱԿ-ի կողմից վճարված 24.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություններ չտրամադրելու համար Զարթոնքի գյուղապետարանի դեմ հայց էր ներկայացրել դատարան դեռևս 2009թ.-ի մարտի 20-ին: Գյուղապետարանը անպատասխան էր թողել ԻԱԿ-ի՝ 07.02.2009թ.-ի գրավոր հարցումը, որով խնդրվել էր տրամադրել համայնքի 2008թ. բյուջեն և 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դատարան էր դիմել 3 պահանջով՝ պարտավորեցնել գյուղապետարանին տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները, Զարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկել և Զարթոնքի գյուղապետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչել:

Դատական գործի ընթացքում գյուղապետարանը տրամադրեց խնդրվող տեղեկությունները, ուստի ԻԱԿ-ը հրաժարվեց տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու և Զարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներից՝ շարունակելով պնդել գյուղապետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը:

Սակայն, ՀՀ վարչական դատարանը մերժեց ԻԱԿ-ի այս հայցապահանջը: Ի դեպ, սա առաջին դեպքն էր, երբ ՀՀ վարչական դատարանը մերժել է տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը: ԻԱԿ-ի բազմաթիվ հայցեր՝ նշյալ պահանջով, բավարարվել են ՀՀ վարչական դատարանի կողմից:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ.-ի սեպտեմբերի 15-ին վարչական դատարանի վճիռը բողոքարկեց ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանը 22.04.2010թ.-ի իր որոշմամբ ԻԱԿ-ի բողոքն ամբողջությամբ բավարարեց և գործն ուղարկեց նոր քննության: Արդյունքում, գործը նորից քննություն անցավ վարչական դատարանում՝ տևելով բավական երկար ժամանակ:

Եվ միան 2012թ.-ի դեկտեմբերի 12-ին երկրորդ անգամ քննելով ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Զարթոնքի գյուղապետարանի՝ գյուղապետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ՝ ՀՀ վարչական դատարանն ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի պահանջները:

ԻԱԿ-ը կստանա տեղեկատվություն և փոխհատուցում

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռով «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը պարտավորվեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրել պարզաբանող տեղեկատվությունը և փոխհատուցել դատական ծախսերը՝ պետությունը և փաստաբանին վճարված ծախսերը 63.500 ՀՀ դրամի չափով:

Այսպիսով, տեղեկատվության ազատության դատական պրակտիկան համալրվեց ևս մեկ դրական նախադեպով:

Դեռևս 2012թ.-ի մայիսի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ստացել են արդյոք պարզատրումներ (պարզաբանողներ, նվերներ) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզատրվել (ըստ հաստիքների) և ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարզատրումների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը և նվերների արժեքների ընդհանուր գումարը:

ԻԱԿ-ի հարցմանը ՊՀ-ն թերի էր պատասխանել՝ չտրամադրելով հարցման 2-րդ և 3-րդ հարցերի պատասխանները: ԻԱԿ-ը 2012թ.-ի հունիսի 20-ին կրկնակի հարցմամբ դիմել էր պետական հիմնարկին՝ խնդրելով տրամադրել ամբողջական և սպառնալից տեղեկատվություն: Կրկնակի հարցման պատասխանով «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն 2012թ.-ի հունիսի 2-ին տրամադրել էր նաև հարցման 3-րդ հարցի պատասխանը,

սակայն մերժել էր տրամադրել 2-րդ հարցի պատասխանը՝ պատճառաբանելով, որ դա պարունակում է աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն:

Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել էր պարզաբանում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական, ինչը ցույց է տալիս, որ խնդրվող տեղեկությունը չի վերաբերում ՊՀ-ի առանձին աշխատակիցների անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Արդյունքում, 2012թ.-ի հունիսի 24-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը:

2012թ.-ի նոյեմբերի 23-ին կայացրած վճռով դատարանը գտավ, որ խնդրվող տեղեկությունների տրամադրումը չի խախտում ՊՀ-ի աշխատակիցների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, քանի որ ԻԱԿ-ը խնդրել էր տեղեկություն տրամադրել ըստ հաստիքների, այլ ոչ անվանական, իսկ ՊՀ-ն իրականում հնարավորություն ուներ տրամադրելու խնդրվող տեղեկություններն առանց իր աշխատակիցների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը ոտնահարելու: Ուստի պահանջված ողջ տեղեկատվությունը ենթակա է տրամադրման:

ՀԴԿ-ն ԻԱԿ-ին կվճարի 100.000 դրամ տեղեկատվությունը թաքցնելու համար

Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը պարտավորվեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրել նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման մասին տեղեկատվություն և փոխհատուցել 100.000 ՀՀ դրամ կազմող դատական ծախսերը՝ պետուրքը և փաստաբանին վճարված գումարը՝ համաձայն 2012թ. դեկտեմբերի 21-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռով (դատավոր՝ Արայիկ Մելքունյան):

Դեռևս 2012թ.-ի ապրիլի 25-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցամբ դիմել էր Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

ՀԴԿ-ն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: 2012թ.-ի մայիսի 16-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը, որը նույնպես մնաց անպատասխան:

2012թ.-ի հուլիս 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմեց դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀԴԿ-ին 5-օրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն և փոխհատուցել դատական ծախսերը:

2012թ.-ի դեկտեմբերի 21-ին դատարանը ճանաչեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և պարտավորեցրեց ՀԴԿ-ին տրամադրել տեղեկատվություն և փոխհատուցել դատական ծախսերը՝ 100.000 դրամի չափով:

Ի դեպ, սա 2012թ. ընթացքում կայացված երկրորդ վճիռն է, որով փոխհատուցվում է ՀԿ-ի կատարած դատական ծախսերը՝ տեղեկատվության ազատությանն առնչվող դատական գործով:

Որքա՞ն են ծախսում նախարարությունները հյուրասիրությունների վրա

Եթե համեմատենք բոլոր տեսակի ներկայացուցչական ծախսերի համար հատկացված և ծախված գումարները, ապա ամենաշատ գումարը հատկացվել է ՀՀ նախագահի աշխատակազմին՝ 225.940.000 ՀՀ դրամ և համապատասխանաբար ամենաշատն էլ ծախսվել է ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից՝ 33.563.700 ՀՀ դրամ:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի սեպտեմբերի 4-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով դիմել էր ՀՀ նախագահի աշխատակազմին, ՀՀ Ազգային ժողովին, ինչպես նաև ՀՀ բոլոր նախարարություններին և խնդրել էր տրամադրել տեղեկություններ նախագահի, Աժ նախագահի և նախարարների պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունների վերաբերյալ: Սառնավորապես.

1. Պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունները ո՞ր կազմակերպությունը կամ անձն է իրականացնում,
2. Եթե ընտրվում է անձը կամ կազմակերպությունը, ապա ի՞նչ սկզբունքով և ի՞նչ ժամկետով,
3. 2012թ.-ի բյուջեով որքա՞ն գումար է նախատեսվել ՀՀ-ում պաշտոնական հանդիպումների ընթացքում տրվող հյուրասիրությունների համար (խնդրում ենք ուստեստների և խմիչքների համար նախատեսվող գումարները ներկայացնել առանձին),
4. 2012թ.-ի հունվարի 1-ից մինչ օրս բյուջեով նախատեսված գումարից որքա՞նն է ծախսվել հյուրասիրությունների համար (խնդրում ենք ուստեստների և խմիչքների համար ծախսված գումարները ներկայացնել առանձին):

Պաշտոնական հյուրասիրություններ

Նշենք, որ որպես կանոն պետական բյուջեով նախատեսված գումարները ոչ թե հյուրասիրությունների համար են, այլ ներկայացուցչական ծախսերի, այդ թվում՝ տարբեր ձևաչափի միջոցառումների և հանդիպումների կազմակերպման: Իսկ հյուրասիրությունների համար հատկացվող և ծախսվող գումարները ներառված են ներկայացուցչական ծախսերի մեջ: Ուստի, պետք է հաշվի առնել, որ հյուրասիրությունների համար առանձին գու-

մարային հատկացում կամ առանձին ծախս և այդ ծախսի առանձին հաշվարկ ոչ միշտ է կատարվում: Այսպես, ԻԱԿ-ի հարցումներին տրամադրված պատասխանները տրամադրվել են ըստ կատարվող հատկացումների և ծախսերի, որոնցում ոչ միշտ են առանձնացված ներկայացված հյուրասիրությունների ծախսերը: Այժմ համեմատենք հյուրասիրությունների համար հատկացված և ծախսված գումարները, ինչպես նաև առանձին ներկայացուցչական ծախսերի համար հատկացված և ծախսված գումարները:

Ըստ ԻԱԿ-ի հարցումներին տրված պատասխան գրությունների բովանդակության՝ պաշտոնական հանդիպումների ընթացքում տրվող հյուրասիրությունների համար առանձնացված ծախսված գումարներ ներկայացրել են ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ առողջապահության, ՀՀ արդարադատության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ արտաքին գործերի, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սփյուռքի և ՀՀ քաղաքաշինության նախարարությունները: Այս մարմիններից հյուրասիրությունների համար ամենաշատ գումարը ծախսել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ 9.600.000 ՀՀ դրամ, իսկ ամենաքիչը՝ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ համապատասխանաբար 200.000 և 174.800 ՀՀ դրամ:

Հարկ է առանձին նշել ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանի մասին: Նախարարությունը նշել է, որ ուստեստների և խմիչքների տրամադրում չի իրականացվում, իսկ հյուրասիրությունները կազմակերպվում են օտարերկրյա պատվիրակությունների ՀՀ այցերի արարողակարգով նախատեսված միջոցառումների շրջանակներում՝ 1 անձի համար 12.500 ՀՀ դրամ հաշվարկով:

Հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի բնույթը և այն, որ ԱԺ-ն ըստ ներկայացված պատասխանի հյուրասիրությունների համար ամենաքիչ գումարը ծախսած մարմիններից է, ԻԱԿ-ը 2012թ.-ի նոյեմբերի 20-ին մեկ այլ գրավոր հարցում ուղարկեց ՀՀ ԱԺ-ին խնդրելով այս անգամ տրամադրել ընդհանուր ներկայացուցչական ծախսերի համար Ազգային ժողովին հատկացված և ծախսված գումարները: ԻԱԿ-ի այս հարցմանը, սակայն, ԱԺ-ն թերի պատասխան էր տրամադրել (տես՝ <http://givemeinfo.am/hy/case/1085/>): Այնուամենայնիվ, ԱԺ-ն նշել էր, որ ներկայացուցչական ծախսերի համար հատկացվել է 195.000.000 ՀՀ դրամ գումար և ծախսվել 165.431.300 ՀՀ դրամ: Ըստ պատասխանի՝ այդ գումարը ծախսվել է հյուրասիրության, հյուրանոցային սպասարկման և հուշանվերների ձեռքբերման համար:

Առավել քան զարմանալի է, որ 195 մլն գումարից հյուրասիրությունների համար հատկացվել է միայն 350.000-ը, այսինքն, հատկացված գումարի 0.17%-ը, իսկ ծախսված ավելի քան 165 մլն դրամից հյուրասիրությունների համար ծախսվել է ընդամենը 200.000-ը, այսինքն 0.12%-ը: Ուշադրության է արժանի, որ ԻԱԿ-ը ներկայացուցչական ծախսերի վերաբերյալ իր հարցմամբ խնդրել էր հայտնել, թե ինչ ուղղություններով են ծախսվել ներկայացուցչական ծախսերի համար հատկացված գումարները, իսկ ԱԺ-ն նշել էր սպառիչ 3 ուղղություն՝ հյուրասիրություն, հյուրանոցային սպասարկում և հուշանվերների ձեռքբերում: Ստացվում է, որ հյուրանոցային սպասարկման և հուշանվերների ձեռքբերման համար հատկացվել է ընդհանուր ներկայացուցչական ծախսերի 99.83%-ը և միայն 0.17%-ը հյուրասիրությունների համար:

Իսկ ընդհանուր ծախսված գումարից հյուրանոցային սպասարկման և հուշանվերների ձեռքբերման համար ծախսվել է 99.88%-ը և միայն 0.12%-ը հյուրասիրությունների համար: Ամեն դեպքում, ՀՀ ԱԺ-ի տրամադրած տեղեկությունների անհամապատասխանությունն ակնհայտ է. եթե ԱԺ-ի ընդունած հյուրերն այնքան փոքրաթիվ են եղել, որ նրանց հյուրասիրության (օրինակ՝ հանդիպումների, այլ միջոցառումների ժամանակ տրվող սուրճի ընդմիջումների և այլն) համար ծախսվել է ընդամենը 200.000 ՀՀ դրամ, ապա ինչու է նույն փոքրաթիվ հյուրերի հյուրանոցային սպասարկման և հուշանվերների ծախսը կազմում 165 մլն:

Եթե համեմատենք ընդհանուր բոլոր տեսակի ներկայացուցչական ծախսերի համար հատկացված և ծախսված գումարները, ապա ամենաշատ գումարը հատկացվել է ՀՀ նախագահի աշխատակազմին՝ 225.940.000 ՀՀ դրամ և համապատասխանաբար ամենաշատն էլ ծախսվել է ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից՝ 33.563.700 ՀՀ դրամ:

Նշենք, որ ՀՀ բնապահպանության, ինչպես նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները պատասխան գրություններով հայտնել են, որ այս գերատեսչությունները ղեկավարող նախարարների պաշտոնական հանդիպումների ընթացքում տրվող հյուրասիրությունների համար ծախսեր նախատեսված չեն:

Պատասխանների բովանդակությունը SU տեսանկյունից

Նշենք, որ ԻԱԿ-ի որևէ հարցում անպատասխան չի մնացել: Լուռ մերժումների բացակայությունը բավական հետաքրքիր է, քանի որ չնայած վերջին մի քանի տարիների ընթացքում լուռ մերժումների թիվը կրճատվել է, միևնույն է՝ լուռ մերժումները կազմում էին տարեկան հարցումների մոտ 25-30%-ը:

Այս փուլում (2012թ. մայիսի 4-ին) ուղարկված 20 հարցումներից 16-ին (80%) տրամադրվել է լիարժեք պատասխան, իսկ 4 (20%) հարցման դեպքում՝ թերի:

Թերի պատասխանների հեղինակներն էին՝

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (<http://givemeinfo.am/hy/case/1034/>),
- ՀՀ սփյուռքի նախարարությունը (<http://givemeinfo.am/hy/case/1044/>),
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը (<http://givemeinfo.am/hy/case/1045/>),
- ՀՀ քաղաքաշինության նախարարությունը (<http://givemeinfo.am/hy/case/1046/>):

Նշենք, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը չէր պատասխանել ԻԱԿ-ի հարցման 3-րդ հարցին, իսկ թերի պատասխան տրամադրած մնացած 3 նախարարությունները՝ հարցման 1-ին հարցին (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը նաև 2-րդ հարցին):

Նշենք, որ 7 դեպքում անհրաժեշտ է եղել կրկնակի հարցում ուղարկել. Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կրկնակի հարցումներ էր ուղարկել թերի պատասխան տրամադրած բոլոր 4 նախարարություններին, ինչպես նաև 33 Նախագահին, 33 մշակույթի և 33 սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին: 33 Նախագահին, 33 մշակույթի և 33 սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին կրկնակի հարցում ուղարկելու պատճառները ներկայացված են ստորև:

Նախ անդրադառնանք 33 Նախագահի աշխատակազմի և 33 մշակույթի նախարարության պատասխաններին (<http://givemeinfo.am/hy/case/1028/>, <http://givemeinfo.am/hy/case/1041/>): ԻԱԿ-ի հարցումները կազմվել և ուղարկվել էին ԻԱԿ-ի իրավաբանի կողմից՝ նրա ստորագրությամբ: Ի պատասխան Կենտրոնի այս հարցումներին՝ 33 Նախագահի աշխատակազմը և 33 մշակույթի նախարարությունը պատասխանել են, որ ԻԱԿ-ի անունից հարցում ուղարկելու և պատասխան ստանալու համար անհրաժեշտ է լիազորագիր: Քանի որ ԻԱԿ-ի հարցման արձագանքը ժամանակին էր, ուստի պատասխաններն համարվել են ժամանակին տրամադրված լիարժեք պատասխաններ, սակայն այս մարմիններին նույնպես կրկնակի հարցումներ են ուղարկվել՝ հարցմանը կից ներկայացնելով լիազորագիր:

Հարկ է նշել, որ թեև լիազորագիր ներկայացնելու պահանջն օրենքի խախտում չէ, սակայն դա լրացուցիչ խոչընդոտ է ստեղծում տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման համար: Պատճառն այն է, որ այն տեղեկությունները, որոնք ենթակա չեն տրամադրման, սահմանափակված են բոլորի համար, իսկ այն տեղեկությունները, որոնց տրամադրումն օրենքով սահմանափակված չէ, պետք է բաց լինեն նույնպես բոլորի համար: Տեղեկատվության ազատության իրավունքից օգտվելու հնարավորությունները բացարձակ հավասար պետք է լինեն բոլորի համար (օրենքը չի առանձնացնում առավելություններ կամ լրացուցիչ պարտականություններ կազմակերպության անունից հանդես եկողի կամ անհատի համար, չի առանձնացնում պատասխան տրամադրելու տարբեր ընթացակարգեր, չի սահմանում թույլատրելի տեղեկատվության տարբեր սահմաններ): Այս

առումով՝ կազմակերպության անունից տեղեկություն խնդրելու դեպքում լիազորագիր ներկայացնելու պահանջը չի բխում տեղեկատվության ազատության կոնցեպցիայից: Լիազորագիր ներկայացնելու պահանջը ստեղծում է խոչընդոտներ, օրինակ՝ ավելորդ անգամ երկարում է տեղեկություն ստանալու ժամկետը: Ելնելով վերոգրյալից՝ նշենք, որ ցանկալի է, որպեսզի տեղեկություն տնօրինող մարմինները նման դեպքերում չպահանջեն ներկայացել լիազորագիր, ինչն ավելի համահունչ կլինի ՏԱ իրավունքի սկզբունքներին:

Եվս 1 կրկնակի հարցում ուղարկվել էր 33 սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, քանի որ կրկնակի հարցումն ուղարկելու պահին՝ առաջին հարցումն ուղարկելուց 1 ամիս անց, նախարարությունը դեռևս ոչ մի պատասխան չէր տրամադրել ԻԱԿ-ին: Սակայն այն բանից հետո, երբ ԻԱԿ-ն արդեն ուղարկել էր կրկնակի հարցումը՝ նախարարությունից ստացվեց լիարժեք պատասխան (<http://givemeinfo.am/hy/case/1043/>): Չնայած դրան՝ նախարարությունն արձագանքել էր նաև ԻԱԿ-ի կրկնակի հարցմանը:

Այսպես, կրկնակի հարցումներից ոչ մեկն անպատասխան չի մնացել, չեն եղել նաև թերի պատասխաններ. կրկնակի 7 հարցումներին էլ տրամադրվել է լիարժեք պատասխան, որոնցից 2-ին տրվել է ժամանակին, ևս 5-ին՝ ուշացած լիարժեք պատասխան:

Պատասխանների ժամկետները

Հարցումներին պատասխանելու ժամկետները համեմատելիս հաշվի են առնվել բոլոր հարցումները, այդ թվում՝ կրկնակի հարցումները՝ ընդհանուր 27 հարցում:

Տեղեկատվության ազատության մասին 33 օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան պետք է տրվի այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստով: Ուստի, պատասխանը չի համարվել ժամկետ խախտած, եթե տրամադրվել է 9 օրացույցային օրվա ընթացքում, որոնցից 5 օրը օրենքով սահմանված ժամկետն է, 2 օրը հաշվարկվել է որպես փոստային առաքման ժամկետ և ևս 2 օրը ոչ աշխատանքային օրերն են՝ շաբաթ և կիրակի: Ամեն դեպքում, անճշտություններից խուսափելու հա-

մար ժամկետները հաշվարկելիս որպես հիմք ընդունվել են հարցումներն ուղարկելու օրը և պատասխան գրության ծրարի վրա փոստային ծառայության կնիքի վրա նշված՝ պատասխան գրությունն ուղարկելու օրը:

Այսպիսով, ԻԱԿ-ի հարցումներին պատասխանելու ժամկետները ներկայացված են 27 հարցումների հաշվարկով, որոնցից 7-ը կրկնակի հարցումներն են: Ընդհանուր առմամբ 27 հարցումներից 12-ին (44%) պատասխան տրամադրվել է ժամանակին, իսկ 15-ին (56%)՝ ժամկետների խախտմամբ:

Լավագույն արդյունքը ժամկետների առումով ցույց է տվել ՀՀ Նախագահի աշխատակազմը, որն իրեն հասցեագրված առաջին հարցմանն արձագանքել է հարցումն ուղարկելուց 6 օր հետո: Նշենք, սակայն, որ ՀՀ Նախագահի աշխատակազմը ուշացումով է պատասխանել կրկնակի հարցմանը՝ պատասխան գրություն տրամադրելով հարցումն ուղարկելուց 11 օր հետո: Ժամկետների առումով լավագույններից են նաև ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ արդարադատության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ մշակույթի նախարարությունները, որոնք ԻԱԿ-ի հարցումներին պատասխանել են հարցումն ուղարկելուց 7 օր հետո:

Ձարմանալի է, բայց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը ժամկետների առումով միաժամանակ և լավագույններից, և վատագույններից է: ԻԱԿ-ի առաջին հարցմանը նախարարությունը պատասխանել է հարցումն ուղարկելուց 1 ամիս 4 օր անց, իսկ ԻԱԿ-ի կրկնակի հարցմանը՝ հարցումն ուղարկելուց 7 օր հետո:

Ժամկետների առումով վատագույն արդյունք ունի ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, որը նույնպես ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է հարցումն ուղարկելուց 1 ամիս 4 օր անց:

Նշենք, որ բոլոր 27 հարցումների հաշվարկով՝ տեղեկատվություն տնօրինողները Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներին պատասխանել են միջինը 13 օրում:

ԻԱԿ-ի ուղարկած հարցումները և դրանց պատասխանները կարող եք գտնել www.givemeinfo.am կայքի յուրաքանչյուր գերատեսչության էջում:

Տեղեկատվության ազատությունը ՏԻՄ-երում

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյոյանի ելույթը «Թափանցիկ կառավարում» հայ-գերմանական համաժողովում, որը կազմակերպել էր Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) 2012թ. դեկտեմբերի 10-ին, ՀՀ Ազգային ժողովում:

Արդեն 9 տարի է՝ գործում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը: Ընդունվելով 2003թ.-ին՝ այս օրենքը համակողմանիորեն կարգավորեց տեղեկատվության ազատության ոլորտը Հայաստանում, սահմանեց տեղեկատվության ազատության ոլորտում առաջացող հիմնական իրավահարաբերությունները՝ անդրադառնալով տեղեկատվության ազատության ապահովման սկզբունքներին, տեղեկություն տնօրինողներին, տեղեկություններ փնտրելու և ստանալու համար սահմանված ժամկետներին, տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերին և կարգին և այլն: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը տեղեկատվություն տնօրինող մարմիններ համարեց նաև տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ինչպիսի՞ն է ՏԱ օրենքի կիրառման պրակտիկան ՏԻՄ-երում: Նախ դիտարկենք ՏԱ պասիվ կողմը, այսինքն, թե ինչպես են ՏԻՄ-երը պատասխանում մարդկանց տեղեկություն ստանալու հարցումներին և տրամադրում տեղեկատվություն:

Տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության իրավունքի վիճակը՝ ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մոնիտորինգների

ԻԱԿ-ը 2011թ.-ին ընդհանուր մոնիտորինգ իրականացրեց՝ գնահատելով Հայաստանում տեղեկատվության ազատության վիճակը: Այդ մոնիտորինգում ներառված էին նաև 10 քաղաքապետարան և 10 գյուղապետարան, որոնցից յուրաքանչյուրին ուղարկվել է տեղեկություն ստանալու 5-ական հարցում՝ ընդհանուր առմամբ 100 հարցում: ԻԱԿ-ի դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ քաղաքապետարաններին ուղարկված 50 հարցումներից 11-ը (22%) մնացել են անպատասխան: Գյուղապետարանների դեպքում անպատասխան են մնացել ուղարկված 50 հարցումներից 21-ը (42%): Արդյունքում, ՏԻՄ-երին ուղարկված 100 հարցումից անպատասխան է մնացել 32-ը (32%):

Նշենք նաև, որ քաղաքապետարանները լիարժեք են պատասխանել իրենց ուղղված 50 հարցումներից 35-ին (70%), որոնցից 23-ին (46%) ժամանակին, իսկ 12-ին (24%) ուշացումով: 3 (6%) հարցման քաղաքապետարանները տվել են անհիմն պատասխան, 1 (2%) հարցում էլ հնարավոր չի եղել հասցնել քաղաքապետարանին (բանավոր հարցում, երբ հնարավոր չի եղել հեռախոսով կապվել քաղաքապետարանի համապատասխան պաշտոնյայի հետ): Գյուղապետարանները լիարժեք են պատասխանել իրենց ուղարկված 50 հարցումներից 24-ին (48%), որոնցից 18-ին (36%) ժամանակին, իսկ 6-ին (12%)՝ ուշացումով: 1 (2%) հարցման տրամադրվել է թերի պատասխան, 1 (2%) հարցում էլ անհիմն մերժվել է: 3 (6%) հարցում էլ հնարավոր չի եղել հասցնել գյուղապետարանին: Արդյունքում, ՏԻՄ-երին ուղարկված 100 հարցումից լիարժեք պատասխան ստացել է 59 (59%) հարցում, որոնցից 41-ը (41%)՝ ժամանակին, 18-ը (18%)՝ ուշացած, 3 (3%) հարցում ստացել է անհիմն պատասխան, 1 (1%) հարցում՝ թերի պատասխան, 1 (1%) հարցում՝ անհիմն մերժում և 4 (4%) հարցում հնարավոր չի եղել հասցնել ՏԻՄ-ին:

2012թ. կատարած ԻԱԿ-ի մեկ այլ վերլուծության շրջանակում տեղեկություն ստանալու հարցումներ ուղարկվեցին 48 քաղաքապետարանների: Այս 48 հարցումներից անպատասխան են մնացել 8-ը (16.5%): Եվս 6 հարցման տրամադրվել է թերի պատասխան (12.5%), իսկ 1 հարցում (2%) ստացել է անհիմն պատասխան: Թերի և անհիմն պատասխաններ տրամադրած, ինչպես նաև հարցումներն անպատասխան թողած 15 քաղաքապետարաններին ուղարկվել են կրկնակի հարցումներ, որոնցից 6-ը (կրկնակի հարցումների 40%) կրկին պատասխան չեն ստացել: Այսպիսով, 64 հարցումներից անպատասխան են մնացել 14-ը (22%): Եթե համեմատենք 2011թ.-ի մոնիտորինգի արդյունքների հետ, ապա անպատասխան մնացած հարցումների ցուցանիշը շատ քիչ է փոխվել 2011-ին՝ 100 հարցման 32%-ը, 2012-ին՝ 64 հարցման 22%-ը: Սա մտահոգիչ ցուցանիշ է:

Ինչպես նշվեց՝ քաղաքապետարաններին ուղարկվել է 64 հարցում, որոնց արդյունքում պատասխան ստացել է 50-ը (78%): Նշենք նաև, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի քաղաքապետարաններին ուղարկված և պատասխան ստացած 50 հարցումներից միայն 34-ին (պատասխան ստացած հարցումների 68%) է տրամադրվել ժամանակին պատասխան, իսկ 16-ի (պատասխան ստացած հարցումների 32%) դեպքում օրենքով սահմանված ժամկետները խախտվել են:

Այսպիսով, տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման ոլորտում առկա հիմնական խնդիրներն են լուռ մերժումները (անպատասխան մնացած հարցումները), հարցումներին պատասխանելու ժամկետները և լիարժեք պատասխանների ապահովումը:

2008թ.-ից ԻԱԿ-ը Քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ իրականացնում է քաղաքացիական և համայնքային ծառայողների վերապատրաստում: Միայն 2011-2012թթ. Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնում 400 համայնքային ծառայող է գիտելիք ստացել տեղեկատվության ազատության վերաբերյալ: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող համայնքային ծառայողների վերապատրաստման այս դասընթացների ժամանակ հենց համայնքային ծառայողների կողմից մի շարք օրինակներ են ներկայացվել, որոնք ցույց են տալիս ՏԱ իրավունքի և գյուղական կյանքի հնարավոր հակասությունները:

Այսպես, երբ վերապատրաստման ընթացքում ԻԱԿ փորձագետը ներկայացնում էր, որ հատկապես տեղական ինքնակառավարման մարմիններում չի պահպանվում տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելու համար օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը, պատասխանները տրամադրվում են ուշացումով, վերապատրաստման մասնակից համայնքային ծառայողներից մեկը հակաճառել է՝ ասելով, որ իրենց մարզում գյուղ կա, որտեղ «երբ հերթը հասնում է գյուղապետին, նա է անասուններին տանում սար, արոտի» և կարող է 1 շաբաթ բացակայել գյուղից: Բնականաբար, նման կենցաղ ունեցող գյուղում դժվար թե գործի այնպիսի վարչական համակարգ, որ գյուղապետն անասուններին արոտ տանելուց առաջ իրեն ժամանակավոր փոխարինող նշանակի:

Մեկ այլ դեպքում էլ կրկին ժամկետների մասին խոսելիս վերապատրաստման մեկ այլ մասնակից նշել է, որ իրենց մարզում գյուղապետ ունեին, որը պաշտոնավարման ընթացքում գնացել էր արտագնա աշխատանքի՝ «խոպան»: Այս դեպքում արդեն խոսքը գնում է ոչ թե գյուղից 1 շաբաթ, այլ մի քանի շաբաթ և անգամ ամիս բացակայելու մասին: Նմանատիպ մի դեպք վերապատրաստման մեկ այլ մասնակից է հիշել, երբ գյուղապետը մի կամ մի քանի շաբաթով գնում է գյուղից՝ այլ բնակավայրում տրակտորիստ աշխատելու համար:

Ըստ ԻԱԿ-ի կազմակերպած վերապատրաստումների մասնակիցների՝ առանձին խնդիր է նաև այն, որ ոչ բոլոր գյուղական համայնքներում կան փոստային բաժանմունքներ, և նամակ ուղարկելու համար պետք է հարևան բնակավայր գնալ: Ոստի, փաստացի այն իրավիճակում, երբ նման փոքր գյուղերում գրագրություն չկա, տեղեկություն ստանալու հարցման պատասխանը կարող է նաև լրացուցիչ մի քանի օր «սպասել», մինչև մի քանի նամակ հավաքվի հարևան բնակավայր գնալու համար կամ գյուղացիներից որևէ մեկը հարևան բնակավայրում այցելելու լինի: Նմանատիպ փոքր բարձրադիր գյուղերում խնդիրն ավելի է սրվում ձմռանը, երբ գյուղի ճանապարհները կարող են տևական ժամանակ տեղումների պատճառով փակ մնալ:

Նշենք, որ գյուղական համայնքներ կան, որոնց տարեկան բյուջեն չի գերազանցում 7 մլն դրամը: Սա նույնպես մարզապետարաններում և քաղաքապետարաններում աշխատող քաղաքացիական և համայնքային աշխատողների ներկայացրած օրինակներից է: Որպես օրինակ նշենք մի դեպք, երբ համայնքային ծառայողներից վերապատրաստման ժամանակ պատմել է, թե իրենց մարզի մի գյուղում ձմռանը բոլոր բնակիչները «փակում են գյուղը» և իջնում հարևան գյուղ՝ ձմեռն անցկացնելու:

Թեև ներկայացված օրինակները յուրահատուկ էին և մասնավոր, սակայն փոքր Հայաստանում 10-20 առկա նման օրինակները, համակցվելով ՏԻՄ-երում ՏԱ ընդհանուր խնդիրների հետ, արդեն բավական են, որպեսզի բացասաբար ազդեն ՏԱ դրական վիճակագրության վրա:

Այժմ մասնավորից կրկին անցում կատարենք Ինֆորմացիայի ազատության կենտրոնի պրակտիկայում վերհանված ընդհանուր խնդիրներին: ԻԱԿ-

ի պրակտիկան ցույց է տվել, որ մարզերում, հատկապես գյուղական համայնքներում, իրական խնդիր է համացանցի առկայությունը: «Շատ գյուղապետարաններում անգամ համակարգիչ չկա, էլ ի՞նչ խոսենք ինտերնետի մասին» այսպիսի արտահայտությամբ բազմիցս են համայնքային ծառայողները ներկայացրել գյուղերում տիրող իրավիճակը: Այսպիսով, նաև խիստ դժվարանում է ՏԻՄ-երի կողմից տեղեկատվության պրոակտիվ հրապարակման գործընթացը: Սա տեղեկատվության ազատության առավել կարևոր բաղադրիչն է, երբ մարմինը սեփական նախաձեռնությամբ է հրապարակում իր տնօրինման տակ գտնվող տեղեկությունները:

Այս դեպքում առավելագույնը գյուղապետարանի պատին փակցված տեղեկությունն է հասանելի միայն գյուղի բնակչին: Թեև տեղեկատվական տեխնոլոգիաների վիճակը քաղաքապետարաններում գյուղական համայնքների համեմատ ավելի բարվոք է, սակայն այստեղ նույնպես իրավիճակը հեռու է բավարարից: Ինտերնետային կայքէջ իրենց թույլ են տալիս քաղաքները, սակայն սպասարկել այդ ինտերնետային կայքն այն մակարդակով, որ դառնա տեղեկատվության լիարժեք աղբյուր՝ էլ ավելի քչերը հնարավորություն ունեն: Շատ քաղաքապետարաններ անգամ ներքին ցանց չունեն՝ աշխատակիցների աշխատանքն առավել արդյունավետ և արագ դարձնելու համար:

Ներկայացնենք մի քանի տվյալ ՏԻՄ-երում պաշտոնական կայքերի առկայության վերաբերյալ: «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի տվյալներով՝ այսօր Հայաստանում կայք ունեն մոտ 80 տեղական ինքնակառավարման մարմիններ 900-ից: Ընդ որում, մեծամասնությունը քաղաքային համայնքներն են: Այս կայքերի մեծ մասը ստեղծվել է հենց «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի կողմից: Սա վկայում է, որ սեփական նախաձեռնությամբ ՏԻՄ-երն իրենց համար կայքեր չեն ստեղծում, ինչի պատճառով էլ այսօր հրապարակայնության ապահովման ինտերնետի ընձեռած հնարավորությունները դուրս են մնացել ՏԻՄ-երի տեսադաշտից և օգտագործվում են բացառապես ՀԿ-ների նախաձեռնությամբ, նրանց ակտիվության շնորհիվ՝ պետական կառավարման և/կամ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

Հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմիններում էլեկտրոնային տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման խնդիրն արձանագրվել է նաև «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունում Հայաստանի Հանրապետության մասնակցության գործողությունների ծրագրում: Ըստ այդ ծրագրի՝ 2012-2014 թթ-ին նախատեսվում է ՀՀ բոլոր 48 քաղաքային համայնքներում ներդնել «Mulberry» համակարգը, որը էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ է և արդեն կիրառվում է ՀՀ նախարարություններում և մարզպետարաններում:

Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման հարցը գոնե մասամբ լուծելու, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկատվության հրապարակումը խթանելու համար՝ ԻԱԿ-ը համայնքներին՝ գյուղական և քաղաքային, տրամադրում է տեղեկատվական ցուցատախտակներ՝ համայնքին առնչվող պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները փակցնելու համար: 2007թ. մինչ օրս ԻԱԿ-ը ՀՀ 57 համայնքներում տեղադրել է 270 տեղեկատվական ցուցատախտակ, որոնց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինները պետք է հրապարակեն իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկատվությունը: Այս տեղեկատվական ցուցատախտակները տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները մատչելի դարձնելու ճկուն, ոչ ծախսատար և արդյունավետ միջոց են:

ՏԱ ոլորտի թերևս ամենալուրջ խնդիրը՝ հրապարակայնության մշակույթի բացակայությունն է: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի վերապատրաստումները և ուսուցումները գալիս են վկայելու, որ դեռևս շատ գյուղապետեր, համայնքային ծառայողներ իրենց գյուղի կամ քաղաքի բյուջեն, համայնքի ղեկավարի որոշումները կամ ՏԻՄ-ի վերաբերյալ այլ տեղեկություններ համարում են միայն իրենցը, իրենց սեփականությունը և պատրաստ չեն դա տրամադրել այլ բնակավայրի բնակչի: Մի մասն էլ պատրաստ է տրամադրել, եթե այլ բնակավայրի բնակիչը հիմնավորի, թե «ինչի՞նչ է պետք ուրիշի համայնքի տեղեկությունը»: Դեռևս շատ դժվար է ձևավորվում այն մտածելակերպը, որ տեղեկությունները ձևավորվում են հասարակության համար և պատկանում են հասարակու-

թյան յուրաքանչյուր անդամի՝ անկախ նրանից, թե որտեղի բնակիչ է, իսկ գյուղապետը ի պաշտոնե գյուղի սեփականատերը չէ:

Հարկ է ամեն դեպքում նշել, որ չնայած տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման ոչ այնքան դրական վիճակագրությանը՝ ամեն դեպքում վերջին 3-4 տարիների ընթացքում SU վիճակն էականորեն փոխվել է ՏԻՄ-երում դեպի լավը: Շատ քաղաքապետարաններ և գյուղապետարաններ սկսել են աշխատել հրապարակային, տեղեկատվության ազատության իրավունքի սկզբունքների համաձայն: Այդ է վկայում 2011թ.-ին ԻԱԿ-ի իրականացրած մոնիտորինգը, որի արդյունքում Օշականի գյուղապետարանը լիարժեք և ժամանակին պատասխան էր տրամադրել իրեն հասցեագրված բոլոր 5 հարցումներին: Նշենք, որ Օշականի գյուղապետը լավագույնն էր ոչ միայն ՏԻՄ-երի շրջանում, այլ մոնիտորինգի ենթարկված բոլոր 50 պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և հանրային նշանակության մարմինների մեջ:

Այսպիսով, տեղական ինքնակառավարման մարմիններում թեև դեռևս վաղ է SU վիճակը գնահատել բավարար, սակայն կարելի է ընդհանուր առմամբ համարել դրականորեն զարգացող:

Միջոցառումներ՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը

Իր 11-ամյա գործունեության ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը բազմաթիվ միջոցառումներ է իրականացրել՝ ուղղված հենց տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը:

Նախ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը իրականացնում է իրավական խորհրդատվություն քաղաքացիների համար տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ: Շատ դեպքերում հենց մարզերի բնակիչներն են դիմում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի օգնությանը՝ հեռախոսով ստանալով խորհրդատվություն, ինչպես նաև, անգամ հեռախոսային խորհրդատվության արդյունքում, մարզի բնակիչի խնդրանքով ԻԱԿ-ը կարող է կազմել հարցում այդ բնակիչի համար:

ԻԱԿ-ը նաև իրականացնում է ռազմավարական

դատավարություններ՝ պաշտպանելով տեղեկատվության ազատության իրավունքը դատական կարգով (<http://foi.am/hy/all-cases/>): SU մասին դատական գործերը դրականորեն են ազդում տեղեկատվության ազատության վիճակի վրա՝ զերծ պահելով պաշտոնյաներին խախտում կատարելուց: Դատական գործեր նախաձեռնելիս նույնպես Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը: Այսպես, ԻԱԿ-ի նախաձեռնած 37 դատական գործերից 13-ը գյուղապետարանների և քաղաքապետարանների դեմ են, ինչպես նաև 3 գործ մարզպետարանների դեմ: Նշենք, որ դատական գործեր նախաձեռնելուց հետո էլ ԻԱԿ-ը շարունակում է ուշադրության կենտրոնում պահել պատասխանող կողմ հանդիսացող գյուղապետարանին կամ քաղաքապետարանին: Պրակտիկան ցույց է տալիս, որ որպես կանոն այն տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք դատարանում են հայտնվում SU իրավունքը խախտելու համար, այդուհետ տեղեկատվության ազատության ոլորտում կտրուկ դեպի դրական են փոխում իրենց աշխատանքը:

Այս ենթատեքստում անհրաժեշտ է նշել ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետի դատական գործը, որը բացառիկ էր: 2009թ.-ին տեղի ունեցած այս գործով ՀՀ վարչական դատարանը դատական պրակտիկայում աննախադեպ վճիռ կայացրեց՝ բավարարելով Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցը՝ պաշտոնատար անձին տեղեկատվություն չտրամադրելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով, որի արդյունքում Վայոց ձորի մարզի Ելփինի գյուղապետ Խորեն Ավետիսյանը պարտավորեցվեց 50.000 ՀՀ դրամ տուգանք մուծել՝ պահանջվող տեղեկատվությունը ԻԱԿ-ին ժամանակին չտրամադրելու համար: Ի դեպ, սա Հայաստանում առաջին դատական նախադեպն էր, որով պաշտոնյան ենթարկվեց վարչական տուգանքի՝ պարտավորվելով վճարել սեփական գրպանից:

Ինչպես արդեն նշվեց, ԻԱԿ-ը խթանում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկատվության հրապարակումը, որն իրականացվում է ՏԻՄ-երում տեղեկատվական ցուցատախտակներ տեղադրելու միջոցով:

Տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման խթանման համար կարևոր նշանակություն ունի նաև բացասականի արձանագրումը և դրականի գնահատումը: Այդ նպատակով ԻԱԿ-ը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում տեղական ինքնակառավարման մարմինների՝ ՏԱ ոլորտում ունեցած դրական և բացասական քայլերը: Մասնավորապես, ԻԱԿ-ը շարունակաբար տեղեկություն ստանալու հարցումներ է ուղարկում տեղական ինքնակառավարման մարմիններին, պատասխանների բովանդակության և տրամադրման ժամկետների հիման վրա իրականացնում է վերլուծություններ և հրապարակում դրանք՝ մատնանշելով ՏԱ ոլորտում աշխատանքի լավագույն և վատագույն արդյունքներն արձանագրած ՏԻՄ-երին:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՏԱ ոլորտում ՏԻՄ-երի աշխատանքի գնահատականը տալիս է նաև այդ ՏԻՄ-երի ղեկավարներին եռամսյակային և տարեկան սև և սպիտակ ցուցակներում ներառելով: Սև ցուցակում ներառվում են այն պաշտոնյաները, ովքեր խախտում են ՏԱ իրավունքը, իսկ սպիտակ ցուցակում այն պաշտոնյաները՝ ովքեր սև ցուցակում հայտնվելուց հետո վե-

րանայում են իրենց գործելաոճը, վերացնում ՏԱ իրավունքի խախտումները և աշխատում բաց և հրապարակային: 2012թ.-ի անցած 3 եռամսյակների ընթացքում ԻԱԿ-ի սև ցուցակում հայտնվել են Վարդենիսի և Վանաձորի քաղաքապետերը: ՏԱ ոլորտում ՏԻՄ-երի դրական կամ բացասական աշխատանքն ԻԱԿ-ն արձանագրում է նաև ՏԱ ամենամյա մրցանակաբաշխության շրջանակներում: Պատահական չէ, որ 10 անգամ անցկացվել է ՏԱ մրցանակաբաշխություն, որոնց ժամանակ 3 քաղաքապետարան համարվել են ամենափակ և գաղտնի գերատեսչություն, ևս 3 քաղաքապետարան և 1 գյուղապետարան ճանաչվել են որպես տարվա ամենաբաց գերատեսչություն:

Քրեական գործերով տեղեկատվության տրամադրման կանոններ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և ՀՀ գլխավոր դատախազությունը համատեղ ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ իրականացվող «Տեղեկատվության մատչելիությունը համայնքային մասնակցության համար» ծրագրի շրջանակում մշակել են քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կանոններ, որոնք հաստատվել են 2012թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի հրամանով:

Կանոններն ուղղված են քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովմանը, այդ գործընթացում ՁԼՄ-ի հետ համագործակության արդյունավետության բարձրացմանը:

Քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կանոնները մշակելու ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը: Այդ նպատակով ՀՀ գլխավոր դատախազության և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի փորձագետներն աշխատանքային այցով եղել են Ստրասբուրգում՝ ոլորտի մասնագետների հետ հանդիպելու և քրեական գործերով տեղեկատվության տրամադրման և սահմանափակումների առանձնահատկությունները քննարկելու նպատակով: Նշենք նաև, որ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ այս կանոնները ուսումնասիրվել, փորձաքննության են ենթարկվել նաև միջազգային փորձագետների կողմից, որոնց ներկայացրած առաջարկներն ու դիտարկումները հաշվի են առնվել փաստաթղթի լրամշակման փուլում: Փաստաթուղթը նաև դրվել է հանրային քննարկման:

«Առավուտ» օրաթերթի իրավական էջի պատասխանատու Ռուզան Մինասյանը նշում է, որ քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կանոնների հստակեցումը կօգնի հատկապես իրավական թեմաներ լուսաբանող նոր սերնդի լրագրողներին. «Անձամբ ինձ այդ «խաղի կանոնները» ծանոթ էին: Այստեղ դրականն այն է, որ դատախազությունը, ելնելով հանրային շահի սկզբունքից, պատրաստակամություն է ցույց տվել քրեական գործերի լուսաբանման ժամանակ տրամադրել «թույլատրելի» տեղեկատվությունից ավելի շատ ինֆորմացիա»:

«Սա աննախադեպ պրակտիկա է, երբ իրավապահ մարմինները, համագործակցելով հասարակական

կառույցի հետ, մշակում և ընդունում են տեղեկատվության ազատությանն ու հրապարակայնությանն ուղղված փաստաթուղթ: Վստահ ենք, որ դատախազության մարմինները այս փաստաթուղթը արդյունավետորեն կկիրառեն իրենց ամենօրյա աշխատանքում: Ինչպես նաև հուսով ենք, որ այս փորձը կներդրվի նաև ՊՆ և ոստիկանության համակարգերում», -նշում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը:

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն իր 28.12.2012թ «Քրեական գործերով տեղեկություն տրամադրելու կանոնները հաստատելու մասին» հրամանում անդրադարձել է տեղեկություն ստանալու իրավունքի երաշխավորման անհրաժեշտությանը, ինչպես նաև հանրությանը քրեական դատավարության և, մասնավորապես, դատախազության գործունեության վերաբերյալ տեղեկություն հաղորդելու կարևորությանը: Կանոնների կատարման վերահսկողությունը ՀՀ գլխավոր դատախազը վերցրել է անձամբ իր վրա:

«Քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կանոնակարգումն այլևս անհրաժեշտություն էր, -կարծում է ՀՀ գլխավոր դատախազի խորհրդակցական Սոնա Տռուզյանը,- քանի որ ամենօրյա աշխատանքի ընթացքում առնչվում էինք բազում խնդիրների՝ կապված քաղաքացիների սահմանադրական իրավունքների իրացման հետ: Դատախազությունն իրականացնում է քրեական քաղաքականությունը, ապահովում հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ և շատ կարևոր է, որ ապահովվելով այդ գործառույթների իրականացման հրապարակայնությունը պահպանվեն մարդու իրավունքները և չհրապարակվեն անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ, չօգտագործվեն այնպիսի որակումներ, որոնք կխախտեն մեղադրյալի անմեղության կանխավարկածը կամ կվտանգեն

հանցագործությունների բացահայտումն ու կանխումը: Եվ հակառակը, նախաքննության գաղտնիք ձևակերպմամբ անհարկի չսահմանափակվի քաղաքացու տեղեկատվություն ստանալու իրավունքը: Յուրաքանչյուր գործնական կիրառման ընթացքում այն

լրագրողներին զերծ կպահի պետական հիմնարկի պատասխանատու աշխատակցի կողմից հնարավոր կամայականություններից, ինչպես նաև նվազագույնի կհասցնի չարաշահումները»:

Հ Ր Ա Մ Ա Ն

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված անձի խոսքի ազատության իրավունքը՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, ինչը ժողովրդավարական հասարակության կարեւորագույն հիմնաքարերից մեկն է, և, միաժամանակ, ընդգծելով այդ իրավունքի չարաշահման անթույլատրելիությունը,

Կարևորելով մարդու՝ տեղեկություն ստանալու իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև հանրությանը քրեական դատավարության և, մասնավորապես, դատախազության գործունեության վերաբերյալ տեղեկություն հաղորդելու կարևորությունը,

Հիմք ընդունելով, որ անմեղության կանխավարկածի, արդար դատաքննության, ընտանիքի ու անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածների համաձայն, պետք է հարգվեն ժողովրդավարական հասարակությունում,

Կարևորելով արդար դատաքննության, անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու և արտահայտվելու ազատության իրավունքների հնարավոր բախումը բացառելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ընդգծելով յուրաքանչյուր դեպքում նշված իրավունքների հավասարակշռված պահպանումը,

Նկատի ունենալով, որ կոռուպցիոն հանցագործությունները լուրջ սպառնալիք են հասարակության կայունությանը և անվտանգությանը, խարխուլ են ժողովրդավարական ինստիտուտները, բարոյական արժեքներն ու արդարությունը, վտանգում կայուն զարգացումն ու օրենքի գերակայությունը,

Ելնելով դատախազության մարմինների գործունեության լուսաբանման աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումից և կարևոր նշանակություն տալով սոցիալական հետաքրքրություններ կայացնող՝ հատկապես հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունների բացահայտման, հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության մասին օպերատիվ և որակյալ տեղեկություն տրամադրելու ապահովմանը,

Սկզբունքորեն կարևոր համարելով զանգվածային լրատվության միջոցների հետ դատախազության մարմինների կայուն համագործակցության հաստատումը, ընդլայնումը և խորացումը, հասարակական միավորումների հետ սերտ կապերի պահպանումը և նկատի ունենալով այդ համագործակցության կազմակերպման սկզբունքներն ու կառուցակարգերը հստակեցնելու, ինչպես նաև դատախազության գործունեության և քննության նյութերը հրապարակման ներկայացնելու հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունը,

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում են՝

1. Հաստատել «Քրեական գործերով տեղեկություն տրամադրելու կանոնները»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին, Հայաստանի Հան-

րապետության գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ղեկավարին, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ին, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներին եւ օգնականներին:

Արդարադատության պետական խորհրդական՝ Ա.Գ.Հովսեփյան

ՀԱՎԵԼՎԱԾ՝
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի 2012 թվականի
դեկտեմբերի 28-ի թիվ հրամանի

Կանոններ քրեական գործերով տեղեկություն տրամադրելու

1. Նպատակը
2. Իրավունքների հավասարակշռված պահպանման սկզբունքները
3. Տեղեկատվության ազատությունը քրեական դատավարության ընթացքում
4. Նախնական քննության գաղտնիքը և տեղեկատվության ազատությունը
5. Քրեական գործերով պաշտոնական հաղորդագրությունների մատչելիությունը
6. Դատախազության՝ որպես քրեական հետապնդում իրականացնող մարմնի, հրապարակային մեկնաբանությունները առանձին գործերով
7. Ձանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ համագործակցությունը
8. Տեղեկության տրամադրումը ՀՀ դատախազության պաշտոնական համացանցային էջի միջոցով
9. Քրեական գործերով տեղեկատվության ազատությունը և մարդու անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը
10. Քրեական գործերով տեղեկատվության ազատությունը և մարդու պատվի ու արժանապատվության իրավունքը
11. Ամենդրության կանխավարկածը
12. Քրեական գործերով անչափահասների վերաբերյալ տեղեկության տրամադրման առանձնահատկությունները
13. Քրեական գործերով տեղեկատվության ազատությունը և վկաների, տուժողների պաշտպանությունը
14. Կոռուպցիոն հանցագործություններով տեղեկատվության ազատությունը
15. Տեղեկատվության չարաշահման արգելքը և դատաքննության ընթացքի վրա վնասակար ազդեցության կանխումը
16. Տեղեկատվության պարբերականությունը

1. Նպատակը

Քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կանոնները (այսուհետ՝ Կանոններ) նպատակ ունեն կանոնակարգելու քրեական դատավարության վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից (այսուհետ՝ Դատախազություն) իրականացվող տեղեկատվական քաղաքականությունը, մշակելու պաշտոնական մամուլի հաղորդագրություններին ուղղված պահանջները՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն) ամրագրված իրավունքները: Նկատի ունենալով, որ Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներով, Սահմանադրության 21-րդ, 23-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված իրավունքները ոչ իրավաչափ գործունեության արդյունքում հնարավոր է բախվեն դատախազությունը սահմանում է իրավական չափորոշիչներ՝ նպատակ ունենալով ապահովելու մարդու իրավունքների հավասարակշռված պահպանումը քրեական դատավարության վերաբերյալ հաղորդագրություններ տարածելիս:

2. Իրավունքների հավասարակշռված պահպանման սկզբունքները

Կանոններն ուղղված են՝ քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն տարածելիս ապահովելու իրավունքների հավասարակշռված պահպանումը՝ հետևյալ առանցքային սկզբունքներով.

- 1) տեղեկատվության ազատությունը,
- 2) անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքը,
- 3) անմեղության կանխավարկածը,
- 4) նախնական քննության գաղտնիությունը,
- 5) հանրային շահը:

Հաշվի առնելով Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներով, Սահմանադրության 21-րդ, 23-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված իրավունքների բախման հավանականությունը, յուրաքանչյուր դեպքում դատախազությունը երաշխավորում է այդ իրավունքների հարգումը՝ մարդու իրավունքների գերակայության և հանրային շահի տեսանկյունից: Մարդու իրավունքներն ու ազատություն-

ները կարող են սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Դատախազությունը պարտավորվում է քրեական դատավարության, դատախազության գործունեության վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ տարածելիս պահպանել նշված սկզբունքները և իրավական նորմերը:

3. Տեղեկատվության ազատությունը քրեական դատավարության ընթացքում

Տեղեկատվության տրամադրումը հարկ է կազմակերպել այնպես, որպեսզի հանրությունը հնարավորություն ունենա, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցով, տեղեկություն ստանալու քրեական գործերի քննության ընթացքի մասին: Դատախազությունը պետք է պարբերաբար տեղեկություններ տրամադրի լրատվության միջոցներին՝ դատախազական գործունեության, ինչպես նաև հասարակական հնչեղություն ունեցող քրեական գործերի նախնական քննության արդյունքների մասին այն ծավալով, որքանով դրանց հրապարակումը չի վտանգի հանցագործությունների կանխմանը, քրեական գործերով նախնական քննության օբյեկտիվությանը, լրիվությանն ու բազմակողմանիությանը, արդարադատության շահերին ու անաչառությանը, չի խախտի մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, ինչպես նաև այլ անձանց պատիվն ու արժանապատվությունը և իրավունքների պաշտպանությունը: Այդուհանդերձ, նշված պայմանները չեն կարող պատճառ դառնալ մերժելու սոսկ փաստական տեղեկության տրամադրումը, և եթե նախնական քննության շահերից ելնելով, մասնավորապես՝ քրեական գործով մինչդեռ տական վարույթի նյութերը տվյալ փուլում հրապարակման ենթակա չեն, ապա քրեական գործ հարուցելու կամ ներգրավված մեղադրյալների թվի մասին տեղեկության տրամադրումն այդ հիմքերով չի կարող մերժվել:

4. Նախնական քննության գաղտնիքը և տեղեկատվության ազատությունը

Նախնական քննության տվյալները, օրենքով սահմանված կարգով, ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

Մինչդատական վարույթի ընթացքում, դատախազությունը, հնարավորության դեպքում, պետք է աջակցի ՋԼՄ-ներին տեղեկություն տրամադրելու հարցում՝ արձանագրելով, որ տրամադրվող տեղեկությունը նախնական է՝ հիմնված այդ պահին վարույթն իրականացնող մարմնի ձեռք բերած փաստական տվյալների վրա: Դատախազությունը կարող է չհրապարակել ՋԼՄ-ների կողմից հարցվող տեղեկությունը, եթե դրա հրապարակումը կարող է վտանգել նախնական քննության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը, լրիվությունը, դատավարության մասնակիցների անվտանգությունը, անմեղության կանխավարկածը, խախտել այլ անձանց իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը, անձնական ու ընտանեկան կյանքը:

Նախնական քննության ավարտի, որպես մեղադրյալ ներգրավված անձանց թվի, մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին տեղեկությունը պետք է տրամադրվի՝ կատարված հարցման հիման վրա, օրենքով սահմանված ժամկետում: Մինչդատական վարույթի փուլում դատախազությունը կարող է չհրապարակել կասկածյալի, մեղադրյալի անուն-ազգանունը՝ սույն Կանոնների 3-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում:

5. Քրեական գործերով պաշտոնական հաղորդագրությունների մատչելիությունը

Մինչդատական վարույթի ընթացքում քրեական գործի վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունը համապատասխան մարմինները պետք է առանց խտրականության մատչելի դարձնեն բոլոր այն լրագրողներին եւ լրատվության միջոցներին, ովքեր դիմել են նույն տեղեկությունը ստանալու համար: Եթե դատախազությունը սեփական նախաձեռնությամբ տեղեկություն է հրապարակում իր գործունեության, կամ որևէ քրեական գործի, կամ նյութերի վարույթի ընթացքի վերաբերյալ, ապա այդպիսի տեղեկությունը պետք է

տրամադրվի բոլորին՝ առանց խտրականության՝ հաղորդագրությունների, մամլո ասուլիսների, լիազորված պաշտոնատար անձի միջոցով:

6. Դատախազության՝ որպես քրեական հետապնդում իրականացնող մարմնի առանձին գործերով հրապարակային մեկնաբանությունները

Նկատի ունենալով, որ դատախազը, Սահմանադրությամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակներում, իրականացնում է նաև քրեական հետապնդում, դատարանում պաշտպանում մեղադրանքը՝ դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների վրա հիմնված իր ներքին համոզմամբ, ուստի առանձին քրեական գործերով նրա ներկայացրած մեկնաբանությունները կամ դրանց վերաբերյալ տարածվող մամուլի հաղորդագրությունները չեն կարող գնահատվել որպես անմեղության կանխավարկածի խախտում:

Այդուհանդերձ, յուրաքանչյուր նման դեպքում պետք է արձանագրվի, որ հրապարակվածը դատախազի ներքին համոզմունքն է՝ հիմնված գործով ձեռք բերված ապացույցների վրա՝ խուսափելով մեղադրյալին կամ անբաստանյալին որպես հանցագործ ներկայացնող գնահատականներից:

7. Ձանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ համագործակցությունը

Դատախազությունը միասնական համակարգ է, և զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունն ապահովվում է ՀՀ գլխավոր դատախազության՝ զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության համար պատասխանատու անձի (այսուհետ՝ Պատասխանատու անձ) միջոցով:

Պատասխանատու անձ, հնարավորինս օպերատիվ, պետք է տեղեկացված լինի այնպիսի քրեական գործերի կամ դատախազական գործունեության արդյունքների մասին, որոնք հնարավոր է արժանանան հասարակության կամ միջազգային հանրության, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների ուշադրությանը, ունենան հասարակական հնչեղություն:

Դատախազության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից սահմանադրական լիազորությունների իրականացման, ինչ-

www.foi.am

պես նաև նրանց կողմից կատարված ուսումնասիրությունների, ամփոփումների վերաբերյալ, Կանոններին համապատասխան, զանգվածային լրատվության միջոցներին տեղեկություն տալու նպատակահարմարության, ժամկետի և ծավալի հարցը որոշում են այդ ստորաբաժանումները ղեկավարող դատախազները:

Դատախազական գործունեությանը վերաբերող նյութերը հրապարակելու հարցը լուծելիս անհրաժեշտ է՝

- կշռադատված մոտեցումն ապահովել հրապարակման ներկայացվող նյութերի ընտրության նկատմամբ,
- խստորեն ղեկավարվել մարդու անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, պատիվն ու բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունքի հիմնադրույթներով,
- ապահովել զանգվածային լրատվության միջոցներում լուսաբանման համար նախատեսված նյութերի ու տվյալների մանրակրկիտ ստուգումը՝ բացառելով պետական կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների հրապարակումը,
- գերծ մնալ կանխակալ կարծիք հայտնելուց:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության անունից պաշտոնական հաղորդագրությունները զանգվածային լրատվության միջոցներին են տրամադրվում բացառապես Պատասխանատու անձի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համաձայնությամբ:

Պաշտոնական հաղորդագրությունների նախապատրաստման համար անհրաժեշտ նյութերը և դրանց նախագծերը մամուլի քարտուղարին են ներկայացնում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալները, դատախազության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազները:

Հրապարակման համար տրամադրված տեղեկատվության ճշգրտության համար պատասխանատվություն են կրում մամուլի քարտուղարին տեղեկություն տրամադրած անձինք:

Մամուլի հաղորդագրությունները պատրաստելիս, հնարավորության դեպքում, կարող են ամբողջու-

թյամբ ներկայացվել կամ օգտագործվել մեջբերումներ՝ քրեական գործ հարուցելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումներից կամ քրեական գործով ձեռք բերված այլ փաստաթղթերից, նյութերից՝ ապահովելով համապատասխան հղումը:

Մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության համար նախատեսված՝ դատախազության գործունեությունը լուսաբանող նյութերը պետք է լինեն պատշաճ կարգով ստուգված և իրավաբանորեն անթերի:

8. Տեղեկության տրամադրումը ՀՀ դատախազության պաշտոնական համացանցային էջի միջոցով

Դատախազությունը «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին այնքանով, որքանով դա չի հակասում մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությանը: Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով և Հանրապետության Նախագահին է ներկայացնում հաղորդում՝ դատախազության նախորդ տարվա գործունեության մասին:

Դատախազությունը պետք է միջոցներ ձեռնարկի նշված հաղորդումը, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ հրապարակվող կամ հանրային ուշադրության կենտրոնում գտնվող հարցերի վերաբերյալ տարածվող տեղեկատվությունը հասանելի դարձնելու բոլորին՝ հնարավորության դեպքում ապահովելով դրանց տեղադրումը ՀՀ դատախազության համացանցային էջում:

9. Քրեական գործերով տեղեկատվության ազատությունը և մարդու անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը

Քրեական գործերով տեղեկություն տրամադրելիս հարկ է ղեկավարվել Սահմանադրությամբ, ըստ որի յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք, ինչպես նաև յուրաքանչյուր ոք ունի անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք: Առանց անձի համաձայնության չի կարելի նրա վերաբերյալ հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Դատա-

խազությունը պետք է քրեական դատավարության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ տարածելիս պահպանի նաև անձի, այդ թվում՝ դատավարության մասնակիցների անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքը և խուսափի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելուց:

10. Քրեական գործերով տեղեկատվության ազատությունը և մարդու պատվի ու արժանապատվության իրավունքը

Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Քրեական դատավարության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ տարածելիս կամ հրապարակային մեկնաբանություններ ներկայացնելիս՝ դատախազությունը պետք է զերծ մնա այնպիսի որակումներից, մեկնաբանություններից, որոնք կարող են արատավորել անձի պատիվն ու արժանապատվությունը, կամ իրավաբանական անձանց գործարար համբավը: Որպես ելակետ պետք է ընդունել, որ ստույգ փաստերի վրա հիմնված (բացառությամբ բնական արատների) կամ գերակա հանրային շահով պայմանավորված հայտարարությունները չեն կարող դիտարկվել որպես մարդու պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկության տարածում:

11. Անմեղության կանխավարկածը

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Անմեղության կանխավարկածի սկզբունքի նկատմամբ հարգանքը արդար դատավարության իրավունքի անքակտելի մասն է: Ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի վերաբերյալ կարծիքներ ու տեղեկություն ՁԼՄ-ներին կարող է տրամադրվել կամ հաղորդվել միայն այն դեպքում և այն ծավալով, եթե դա չի վտանգում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը: Եթե, այդուհանդերձ, դատախազությունը մինչդատական վարույթի փուլում որոշել է տեղեկություն տրամադրել սեփական նախաձեռնությամբ կամ ՁԼՄ-ներից ստացված հարցումների հիման վրա, ապա, միաժամանակ, պետք է խուսափի կասկածյալին կամ

մեղադրյալին ձեռնաշղթաներով ցուցադրելուց կամ որպես հանցագործ ներկայացնելու ցանկացած այլ եղանակից:

Մինչդատական վարույթի ընթացքում քրեական գործի վերաբերյալ դատախազության կողմից տարածվող մամուլի հաղորդագրությունները պետք է պարունակեն ծանուցում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հանցագործության մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

12. Քրեական գործերով անչափահասների վերաբերյալ տեղեկության տրամադրման առանձնահատկությունները

Դատախազական գործունեության կամ քրեական գործերի դատավարության վերաբերյալ տեղեկություն տրամադրելիս հատուկ ուշադրություն պետք է դարձվի անչափահասների իրավունքների պաշտպանությանը: Մինչդատական վարույթի փուլում դատախազությունը պետք է ձեռնպահ մնա անչափահաս կասկածյալի, մեղադրյալի, տուժողի կամ վկայի ինքնությունը, անուն-ազգանունը հրապարակելուց: Բոլոր դեպքերում դատախազությունն իր իրավասությունների շրջանակներում պետք է կանխի այն վտանգավոր հետևանքները, որոնք կարող են հանգեցնել անչափահասի ինքնության հրապարակումը, կամ որոնք կարող են խոչընդոտել նրա՝ հասարակությանը վերաինտեգրվելուն:

13. Քրեական գործերով տեղեկատվության ազատությունը եւ վկաների, տուժողների պաշտպանությունը

Քրեական գործերի վերաբերյալ տեղեկություն տրամադրելիս վկաների, տուժողների ինքնությունը չպետք է հրապարակվի, եթե դա վտանգում է նրանց կյանքն ու անվտանգությունը:

Վկաների և տուժողների ինքնությունը կարող է գաղտնազերծվել, եթե վկան կամ տուժողը նախապես տվել են իրենց համաձայնությունը, կամ նրանց ցուցմունքի բովանդակության հրապարակումն ունի հանրային կարևորություն, կամ նրանք արդեն իսկ հանդես են եկել տվյալ քրեական գործի վերաբերյալ հրապարակային ելույթներով:

14. Կոռուպցիոն հանցագործություններով տեղեկատվության ազատությունը

Դատախազությունն իր լիազորությունների շրջանակներում պետք է հնարավորինս ապահովի հատկապես կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների հրապարակայնությունը, աջակցի քաղաքացիական հասարակության ներգրավմանը կոռուպցիայի դեմ պայքարում:

Հանրային շահի առկայության պայմաններում դատախազությունը պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու կոռուպցիոն հանցագործությունների կապակցությամբ քննվող քրեական գործերի մասին տեղեկատվության հասանելիությունը հասարակության առավել լայն շրջանակներին: Իրականացնի հանրային իրազեկմանն ուղղված քարոզարշավ՝ նպաստելու կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձեւավորմանը, խրախուսի և պաշտպանի կոռուպցիայի մասին քաղաքացիների՝ տեղեկություն փնտրելու, ստանալու, հրապարակելու, տարածելու ազատությունը:

15. Տեղեկատվության չարաշահման արգելքը և դատաքննության ընթացքի վրա վնասակար ազդեցության կանխումը

Վարույթն իրականացնող մարմինը քրեական գործով նախնական քննության և դատաքննության վերաբերյալ տեղեկատվությունը չպետք է օգտագործի շահույթ ստանալու կամ օրենքի իրավաչափ կիրառման հետ չառնչվող այլ նպատակներով:

Քրեական դատավարության ընթացքում դատախազությունը պետք է ձեռնպահ մնա այնպիսի տեղեկության հրապարակումից, որը կարող է էապես ազդել դատաքննության բնականոն ընթացքի վրա: Մինչդրատական վարույթի փուլում կարող են չհրապարակվել կոնկրետ քրեական գործով նախաքննություն իրականացնող քննիչի և հսկողություն իրականացնող դատախազի ինքնության վերաբերյալ տեղեկությունները՝ նրանց նկատմամբ հնարավոր ներգործությունը բացառելու, օրենքով նախատեսված այլ բացասական երևույթները կանխելու համար:

16. Տեղեկատվության պարբերականությունը

Հանրային հետաքրքրություն ներկայացնող կամ հանրության հատուկ ուշադրությանն արժանացած քրեական գործերի վերաբերյալ լրատվության միջոցներին տեղեկություն պետք է տրամադրվի պարբերաբար: Եթե դատախազությունը կոնկրետ քրեական գործի հարուցման, որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին հանրությանը տրամադրել է տեղեկություն, ապա նույն եղանակով տեղեկություն պետք է տրամադրվի նաև նախնական քննության վերջնական արդյունքների, ինչպես նաև դատարանի կողմից ապացուցված հանգամանքների մասին:

ՍԵՎ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՑՈՒՑԱԿՆԵՐ - 2012

ՍՊԻՏԱԿ ՑՈՒՑԱԿ- 2012

2011թ.-ից Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր տարեկան Սև ցուցակին զուգահեռ հրապարակում է նաև տարեկան Սպիտակ ցուցակ: Բոլոր այն գերատեսչությունները, որոնք եռամսյակային Սև ցուցակներում հայտնվելուց հետո վերանայում են տեղեկատվության ազատության ոլորտում իրենց գործունեությունը և բարեփոխումներ իրականացնում տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով, այլևս չեն ընդգրկվում տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների տարեկան ամփոփ Սև ցուցակում: Այդ գերատեսչություններն ու նրանց ղեկավարներն ընդգրկվում են ԻԱԿ-ի ամենամյա Սպիտակ ցուցակում:

- **Լևոն Խալիկյան** - ԶԳ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության պետական տեսչության պետ

ԶԳ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության պետական տեսչության պետ Լևոն Խալիկյանը հայտնվել էր 4-րդ եռամսյակային Սև ցուցակում, քանի որ անհիմն պատասխան էր տրամադրել 2012թ.-ի հոկտեմբերի 5-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուղարկած տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը, որով ԻԱԿ-ը խնդրել էր հայտնել, թե որտե՞ղ և ի՞նչ կարգով է տեսչությունը հրապարակում ՏԱ մասին ԶԳ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները: Պատասխանը համարվել էր անհիմն, քանի որ տեսչությունը մշել էր, որ խնդրվող տեղեկությունները զետեղված են ԶԳ էկոնոմիկայի նախարարության կայքում, որտեղ, սակայն, դրանք առկա չէին, մասնավորապես՝ կայքի՝ Շուկայի վերահսկողության պետական տեսչությանը վերաբերող հետևյալ հասցեում՝ www.mineconomy.am/arm/49/gortsaruyt.html: Ուստի, ԻԱԿ-ը 20.11.2012թ.-ին դիմել էր ԶԳ էկոնոմիկայի նախարարին՝ խնդրելով ապահովել, որպեսզի հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ավել, քան յոթ օրվա ընթացքում, ԶԳ էկոնոմիկայի նախարարության կայքում տեղադրվի Շուկայի վերահսկողության պետական տեսչության վերաբերյալ՝ ՏԱ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկատվությունը: 2012թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ արդեն ԶԳ էկոնոմիկայի նախարարության կայքի շուկայի վերահսկողության պետական տեսչության բաժնում տեղադրված են տվյալ ծառայության կողմից իրականացված 2011 և 2012թթ. ստուգումների ամփոփ հաշվետվությունները, ստուգումների ընթացքում պահանջվող փաստաթղթերը, ստուգաթղթերի լրացման վերաբերյալ ուղեցույց, տեսչության հասցեն, հեռախոսահամարները, նաև՝ օրենսդրության փաթեթը, որի շրջանակներում աշխատում է մշյալ կառույցը: Այսպիսով, Շուկայի վերահսկողության պետական տեսչության տվյալներն այսուհետ մատչելի են հասարակության համար: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/1065/>

- **Անահիտ Վարդանյան** – Լ. Շանթի անվան թիվ 4 դպրոցի տնօրեն

Լ. Շանթի անվան թիվ 14 դպրոցի տնօրեն Անահիտ Վարդանյանը հայտնվել էր ԻԱԿ-ի 3-րդ եռամսյակային սև ցուցակում, քանի որ անպատասխան էր թողել ԻԱԿ-ի՝ 2012թ.-ի օգոստոսի 17-ի հարցումը դպրոցում 1-ին դասարանի ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ, ինչպես նաև 2012թ.-ի սեպտեմբերի 12-ին ուղարկված նույնաբովանդակ կրկնակի հարցումը: Սև ցուցակում հայտնվելուց անմիջապես հետո Անահիտ Վարդանյանը կապվեց Կենտրոնի հետ, տրամադրեց պահանջվող ողջ տեղեկատվությունը՝ խոստանալով հետագայում նույնպես գործել բաց և հրապարակային: Հաշվի առնելով տեղեկատվության ազատության իրավունքի խախտումը վերացնելու ուղղությամբ Լ. Շանթի անվան թիվ 14 դպրոցի տնօրենի ջանքերը՝ նա չի ներառվել Կենտրոնի Սև ցուցակում և հայտնվել է Սպիտակ ցուցակում: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/1054/>, <http://www.givemeinfo.am/hy/case/1013/>

ՍԵՎ ՑՈՒՑԱԿ- 2012

Այս անձինք խախտել են մարդկանց տեղեկատվություն ստանալու իրավունքը 2012թ. ընթացքում:

- **Վոլոդյա Խլոյան** - Վարդենիսի քաղաքապետ

ԻԱԿ-ը 2012թ.-ի փետրվարի 17-ին ուղարկված գրավոր հարցմամբ Վարդենիսի քաղաքապետից խնդրել էր տեղեկություններ Վարդենիս քաղաքի բյուջեով ձյան մաքրման աշխատանքների համար նախատեսված և հատկացված գումարների վերաբերյալ: Քաղաքապետարանը հարցմանը չի պատասխանել: ԻԱԿ-ը 2012թ.-ի մարտի 15-ին կրկնակի հարցում է ուղարկել քաղաքապետին, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/entity/239/>

- **Սամվել Դարբինյան** - Վանաձորի քաղաքապետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի փետրվարի 21-ին ուղարկված տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ Վանաձորի քաղաքապետից խնդրել էր տեղեկություններ քաղաքի բյուջեով ձյան մաքրման աշխատանքների համար նախատեսված և հատկացված գումարների վերաբերյալ: Քաղաքապետը հարցմանը չի պատասխանել: ԻԱԿ-ը 2012թ.-ի մարտի 15-ին կրկնակի հարցում է ուղարկել քաղաքապետին, որը ևս մնացել է անպատասխան: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/entity/290/>

- **Սերժ Սարգսյան** - Հայաստանի հանրապետական կուսակցության նախագահ

2012թ.-ի մայիսի 25-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Հայաստանի հանրապետական կուսակցությանը՝ խնդրելով տեղեկություններ 2012թ. մայիսի 4-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կազմակերպած միջոցառման վերաբերյալ: Կուսակցությունը հարցումը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը հունիսի 14-ին կրկնակի հարցում է ուղարկել կուսակցությանը, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Տես՝ <http://givemeinfo.am/hy/case/950/> և <http://givemeinfo.am/hy/case/983/>

- **Գագիկ Ծառուկյան** - Բարգավաճ Հայաստան կուսակցության նախագահ

2012թ.-ի ապրիլի 25-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Բարգավաճ Հայաստան կուսակցությանը՝ խնդրելով տեղեկություններ կուսակցության կողմից նախընտրական քարոզչության վրա ծախսված գումարների վերաբերյալ: Կուսակցությունը հարցումը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը մայիսի 16-ին տեղեկություն ստանալու կրկնակի հարցում է ուղարկել կուսակցությանը, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել էր անպատասխան: ԻԱԿ-ը դատական կարգով բողոքարկել է ԲՀԿ-ի լուռ մերժումը, իսկ դատական գործի ընթացքում ԲՀԿ-ն տրամադրել է պահանջվող տեղեկությունը: Տես՝ <http://givemeinfo.am/hy/case/928/> և <http://givemeinfo.am/hy/case/941/>, ինչպես նաև դատական գործը՝ <http://foi.am/hy/all-cases/item/1037/>

- **Լևոն Տեր-Պետրոսյան** - «Հայ ազգային կոնգրես» դաշինքի նախագահ

2012թ.-ի ապրիլի 25-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր «Հայ ազգային կոնգրես» դաշինքին՝ խնդրելով տեղեկություններ կուսակցության կողմից նախընտրական քարոզչության վրա ծախսված գումարների վերաբերյալ: Դաշինքը հարցումը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը մայիսի 16-ին տեղեկություն ստանալու կրկնակի հարցում է ուղարկել դաշինքին, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Տես՝ <http://givemeinfo.am/hy/case/929/> և <http://givemeinfo.am/hy/case/943/>

- **Արամ Սարգսյան** - Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ

2012թ.-ի ապրիլի 25-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀԴԿ-ին՝ խնդրելով տեղեկություններ կուսակցության կողմից նախընտրական քարոզչության վրա ծախսված գումարների վերաբերյալ: Կուսակցությունը հարցումը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը մայիսի 16-ին կրկնակի հարցում է

ուղարկել կուսակցությանը, որը ևս մնացել է անպատասխան: ԻԱԿ-ը դատական կարգով բողոքարկել է ՅԴԿ-ի լուռ մերժումը: Տես՝ <http://givemeinfo.am/hy/case/933/> և <http://givemeinfo.am/hy/case/940/>, ինչպես նաև դատական գործը՝ <http://foi.am/hy/all-cases/item/1038/>

- **Վիկտոր Մարտիրոսյան** – «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պետ

29.05.2012թ.-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ին և խնդրել տրամադրել տեղեկություններ 2011թ.-ին ՊՅ-ի աշխատակիցների ստացած պարզաբանումների մասին: Հարցումն ուղարկելուց 3 օր անց ՊՅ-ն տրամադրել է թերի պատասխան: Պատասխանը համարվել է ոչ լիարժեք, քանի որ բացակայել են Կենտրոնի խնդրած՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի պարզաբանում ստացած աշխատակիցների և դրամական պարզաբանումների չափի մասին տեղեկությունները: 20.06.2012թ.-ին ուղարկված նույնաբովանդակ կրկնակի հարցմանը պետական հիմնարկը պատասխանել է անհիմն մերժումով՝ պատճառաբանելով, որ խնդրվող տեղեկությունները ՊՅ-ի աշխատակիցների անհատական տվյալներ են: ԻԱԿ-ը բողոքարկել է «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի մերժումը: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2012թ.-ի նոյեմբերի 23-ին կայացրած վճռով ճանաչել էր ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և պարտավորեցրել էր «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը: Պետական հիմնարկը բողոքարկել է դատարանի վճիռը՝ վերաքննության կարգով: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/988/> և <http://www.givemeinfo.am/hy/case/963/>, ինչպես նաև դատական գործը՝ <http://foi.am/hy/all-cases/item/1052/>

- **Սոնա Ղարիբյան** – Ֆինանսական վերահսկողության տեսչության պետ

ԻԱԿ-ը 2012թ.-ի մայիսի 29-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ֆինանսական վերահսկողության տեսչությանը և խնդրել տրամադրել տեղեկություններ 2011թ.-ին տեսչության աշխատակիցների ստացած պարզաբանումների մասին: Տեսչությունը տրամադրել է թերի պատասխան, քանի որ բացակայել են Կենտրոնի խնդրած՝ Ֆինանսական վերահսկողության տեսչության՝ պարզաբանում ստացած աշխատակիցների և դրամական պարզաբանումների չափի մասին տեղեկությունները: 23.06.2012թ.-ին ուղարկված նույնաբովանդակ կրկնակի հարցմանը տեսչությունը պատասխանել է անհիմն մերժումով՝ համարելով դրանք տեսչության աշխատակիցների անհատական տվյալներ: ԻԱԿ-ը բողոքարկել է Ֆինանսական վերահսկողության տեսչության մերժումը դատական կարգով: Դատական գործը դեռևս ընթացքում է: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/981/> և <http://www.givemeinfo.am/hy/case/995/>, ինչպես նաև դատական գործը՝ <http://foi.am/hy/all-cases/item/1053/>

- **Կարեն Թամազյան** – Լիցենզավորման գործակալության պետ

2012թ.-ի մայիսի 29-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել Լիցենզավորման գործակալությանը՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ 2011թ.-ին գործակալության աշխատակիցների ստացած պարզաբանումների մասին: Գործակալությունը տրամադրել է թերի պատասխան, քանի որ բացակայել են Կենտրոնի խնդրած տեղեկությունները: 23.06.2012թ.-ին ուղարկված նույնաբովանդակ կրկնակի հարցմանը գործակալությունը պատասխանել է անհիմն մերժումով՝ համարելով դրանք տեսչության աշխատակիցների անհատական տվյալներ: ԻԱԿ-ը բողոքարկել է Լիցենզավորման գործակալության մերժումը դատական կարգով: Դատական գործը դեռևս ընթացքում է: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/980/> և <http://www.givemeinfo.am/hy/case/994/>, ինչպես նաև դատական գործը՝ <http://foi.am/hy/all-cases/item/1053/>

- **Կարեն Խտրյան** – Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ

ԻԱԿ-ը 2012թ.-ի մայիսի 29-ին փոստով տեղեկություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել Իրավական ակտերի փորձաքննության գործակալությանը և խնդրել տրամադրել տեղեկություններ 2011թ.-ին

www.foi.am

գործակալության աշխատակիցների ստացած պարզևատրումների մասին: Գործակալությունը տրամադրել է թերի պատասխան: Պատասխանը համարվել է ոչ լիարժեք, քանի որ բացակայել են Կենտրոնի խնդրած տեղեկությունները: 23.06.2012թ.-ին ուղարկված նույնաբովանդակ կրկնակի հարցմանը գործակալությունը պատասխանել է անհիմն մերժումով՝ համարելով, որ այդ տեղեկությունները վերաբերում են գործակալության աշխատակիցների անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/957/>, <http://www.givemeinfo.am/hy/case/998/>

● **Արրամ Բախչազուլյան** – Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ

2012թ.-ի մայիսի 29-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը՝ խնդրելով տեղեկություններ 2011թ.-ին ծառայության աշխատակիցների ստացած պարզևատրումների մասին: Ծառայությունը տրամադրել է թերի պատասխան, քանի որ բացակայել են Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պարզևատրում ստացած աշխատակիցների և դրանական պարզևատրումների չափի մասին տեղեկությունները: 23.06.2012թ.-ին ուղարկված նույնաբովանդակ կրկնակի հարցումը ծառայությունը թողել է անպատասխան: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/964/> և <http://www.givemeinfo.am/hy/case/999/>

● **Լիյա Վարդգեսյան** – Ստեփան Շահունյանի անվան թիվ 1 դպրոցի տնօրեն

2012թ.-ի օգոստոսի 17-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Ստեփան Շահունյանի անվան թիվ 1 դպրոցին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ դպրոցում 1-ին դասարանի ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ: Դպրոցն անպատասխան է թողել հարցումը: Դպրոցը չի պատասխանել նաև սեպտեմբերի 12-ին ուղարկված նույնաբովանդակ կրկնակի հարցմանը: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/1011/>, <http://www.givemeinfo.am/hy/case/1052/>

● **Իրա Հակոբյան** – Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 դպրոցի տնօրեն

2012թ.-ի օգոստոսի 17-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 դպրոցին և խնդրել էր տեղեկություններ դպրոցում 1-ին դասարանի ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ: Դպրոցը հարցմանը չի պատասխանել: Դպրոցն անպատասխան է թողել նաև սեպտեմբերի 12-ին ուղարկված նույնաբովանդակ կրկնակի հարցումը: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/1012/>, <http://www.givemeinfo.am/hy/case/1053/>

● **Վահրամ Կիրակոսյան** - «Երևան Սիթի» սուպերմարկետների ցանցի տնօրեն

2012թ.-ի հոկտեմբերի 12-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր «Երևան Սիթի» սուպերմարկետների ցանցին և խնդրել էր հայտնել, թե 2011թ. և 2012թ. ե՞րբ և որտե՞ղ են հրապարակվել ՏԱ մասին ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները: Սուպերմարկետը հարցմանը չի պատասխանել: 2012թ.-ի նոյեմբերի 15-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու կրկնակի հարցմամբ է դիմել «Երևան Սիթի» սուպերմարկետների ցանցին՝ ևս մեկ անգամ խնդրելով տրամադրել վերոնշյալ տեղեկությունները: Սակայն, սուպերմարկետների ցանցը անպատասխան է թողել նաև ԻԱԿ-ի կրկնակի հարցումը: Տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/1071/> և <http://www.givemeinfo.am/hy/case/1082/>:

Rules For Providing Information on Criminal Cases are Adopted

The Freedom of information Center and RoA Prosecutor General's Office have developed rules for providing information on criminal cases, within the USAID supported Access to Information for Community Involvement project. The rules were approved on December 28, 2012 by RoA Prosecutor General Aghvan Hovsepyan's order. The rules are aimed at ensuring access to information on criminal proceedings, and increasing efficiency of cooperation with mass media in that process.

The international experience was studied during development of the rules for providing information on criminal cases. For this purpose the experts of RoA Prosecutor General's Office and Freedom of information Center visited Strasbourg to meet the specialists in the sphere and to discuss the particularities of providing information on criminal cases and its restrictions. It has to be noted that with the support from OSCE Yerevan Office the rules were studied and evaluated by international experts, whose recommendations and remarks were duly noted in the document development phase. Also, public discussions of the document took place.

